

ԱԶԳԱԿ

AZTAG QUOTIDIEN POLITIQUE ET LITTÉRAIRE

أزتاگ جريدة يومية سياسية وأدبية - الديرة المسؤولة: إيشا آدویشیان

1500 L.Ո. 74ԴԳ. ՏԱՐԻ, ԹԻՒ 192 (20948) ՀԻՆԳՇԱՐԹԻ, 25 ՀՈԿՏԵՄԲԵՐ 2001 10 ԷՋ

ՊՈՒՇԵՆ ՆԱՄԱԿՆԵՐ՝ ԶՕՐ. ԼԱՅՈՒՏԻ ԵՒ ՎԱՐՉԱՊԵՏ ԴԱՐԻՐԻԻ



Նախագահ Լահուտ կ'ընդունի ամերիկացի դեսպանը:

Նախագահ Վոր. Էմիլ Լահուտ երեկ ընդունեց Միացեալ Նահանգներու դեսպան Վինսոն Պեթլը, որ Վոր. Լահուտի յանձնեց նախագահ ձորճ Պուշեն նամակ մը:

Պուշեն իր նամակին մէջ շնորհակալութիւն կը յայտնէ Սեպտեմբեր 11ի ահաբեկչական արարքներէն ետք Լիբանանի ցաւակցութեան ու Վորակցութեան, իր կարգին ցաւակցութիւն յայտնելով այդ արարքին պատճառած երեք լիբանանցի զոհերուն համար:

«Այդ արարքները ապատութեան դէմ ուղղուած էին, բայց ապատութիւնը պիտի պաշտպանուի եւ վճռած ենք պարտութեան մատնել ահաբեկիչները եւ աշխարհին արմատախիլ ընել ահաբեկչութիւնը», կը գրէ Պուշեն խնդրելով Լիբանանի օժանդակութիւնը այս պայքարին:

ՆԱԵՒ՝ ԸԱՐԻՐԻԻ

ձորճ Պուշեն շնորհակալական նամակ մը յղեց նաեւ վարչապետ Ռաֆիք Հարիրիի:

Ծար.ը՝ Էջ 3

ՀԱՅԵՒՍՈՒՐԻԱԿԱՆ

ԳՈՐԾԱԿՑՈՒԹԻՒՆԸ

ԹԵՒԱԿՈՒՄԵՑ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՓՈՒԼ

Արտադրական ենթակառոցներու գործունէութիւնը համակարգող նախարար Դաւիթ Զատոյեան Երեքշաբթի, 23 Հոկտեմբերին ընդունած է սուրիական պատերազմութիւն մը, գլխաւորութեամբ Սուրիոյ շինարարութեան նախարար Մուհամէտ Մուշալթայի:

Վկայակոչելով Սուրիոյ մէջ անցեալ զարնան ստորագրուած հայեւորական գործակցութեան համաձայնագիրը, Մուշալթայ յայտնած է, թէ իր այցելութեան նպատակն է այդ համաձայնագիրը գործնական փուլին անցնել, հիմնականօրէն երեք ուղղութեամբ՝ անձնակազմի պատրաստութիւն եւ վերապատրաստութիւն, շինարարական—ուժանիւթային աշխատանքներու նախագծում եւ Հայաստանի երկրորդ արհեստագիտական արտադրութիւններու սպառում՝ սուրիական շուկաներու մէջ:

Հանդիպումին կողմերը նաեւ համաձայն գտնուած են հայեւորական շինարարական միացեալ ձեռնարկութիւն մը ստեղծելու առնչութեամբ սուրիացի նախարարի առաջարկին:

ԱԼԻԵՒ ԿԸ ՍՊԱՌՆԱՅ

«ԱԶԱՏԱԳՐԵԼ» ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԸ

Ազրպէյճանի նախագահ Հայտար Ալիեւ, ԵԱՀԿի խորհրդարանական վեհաժողովի նախագահ Ատրիան Սեւերինի հետ Պաքուի մէջ լայնացած հանդիպումին ընթացքին յատարարած է, թէ եթէ Ազրպէյճան ԵԱՀԿին աւելի մեծ աջակցութիւն չստանայ, ապա Լեռնային Ղարաբաղի մէջ տիրող իրավիճակը փոխելու համար պիտի դիմէ ռազմական գործողութիւններու: «Կամ ԵԱՀԿի Մինսքի խմբակը կ'ստի որդեգրէ սկզբունքային դիրքորոշումը, եւ կ'ամ մենք պիտի ազատագրենք մեր հողերը ռազմական միջոցներով», Սեւերինի յայտնած է Ազրպէյճանի նախագահը:

Ալիեւ ԵԱՀԿը մեղադրած է, ըսելով, որ կազմակերպութիւնը աչք կը խփէ Հայաստանի «ոչ կառուցողական» քաղաքականութեան նկատմամբ: Ան ըսած է, թէ «ԵԱՀԿ պէտք է յարգէ Ազրպէյճանի պահանջը, ըստ որում, Լեռնային Ղարաբաղի տազնապը պէտք է լուծուի տարածքային ամբողջականութեան սկզբունքի հիման վրայ»:

ԵԱՀԿի խորհրդարանական վեհաժողովի նախագահը իր կարգին նշած է. «Ես համաձայն եմ, որ մենք անտարբեր պէտք չենք մնալ այն հարցին նկատմամբ, թէ ո՞վ է յարձակողը, եւ ո՞վ՝ զոհը: Կը կարծեմ, որ այս հարցին առնչութեամբ միջազգային համայնքը աւելի գործօն պատասխանատուութիւն պէտք է ունենայ»:

●ԱՆԴՐԱՌԴԱՆԱԼԻՎ Ազրպէյճանի նախագահ Ալիեւի պատարած յայտարարութիւններուն, Հայաստանի կաշտպանութեան նախարար Սերժ Սարգսեան յայտարարած է, թէ եթէ, հակառակ պարագային, պատերազմը վերսկսի, ապա ատիկա Ազրպէյճանի վերջին պարտութեան սկզբնաւորութիւնը պիտի ըլլայ:

ԹԵՒ ՏԱՐԱԿԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԳՈՅՈՒԹԻՆ ՈՒՆԻՆ

ԹԵԼ ԱՒԻԻ - ՈՒԱՇԻՆԿՈՆՆ ԿԱՊԵՐԸ ԿԸ ՄՆԱՆ ԱՄՈՒՐ

Կ'ԸՍԵ ԱՐԻԵԼ ԸԱՐՈՆ

Իսրայէլ երէկ վերահաստատեց, թէ Միացեալ Նահանգներուն նախանշ չէին արձանագրած: Մեկնաբաններէն մէկը «Ետիոթ Սիրոնոթ»ի մէջ կը գրէր, որ Սեպտեմբեր 11էն ի վեր, ամերիկացիները ունեցած են մօտաւորապէս վեց հազար զոհ, անոնք կը դիմագրաւեն տնտեսական դժուարութիւններ, անթրաքսն ու թալպանները. հետեւաբար, անոնք պատրաստ չեն հանդուրժելու Ծարունը, որ կը մնան ամուր, թէեւ երկու բարեկամները տարակարծիք են պատահականութեան շրջաններու ներխուժումին հարցին նկատմամբ:

Ան դիտել տուաւ, որ ամերիկացիներուն հետ բարեկամութիւնը կը մնայ ամուր, որովհետեւ անիկա իսկական ու մնայուն է: Իսրայէլացի մեկնաբաններ սակայն համակարծիք չեն Ծարունի: Անոնք կ'ըսեն, որ Ծարունի վարչապետ ընտրութենէն ի վեր Իսրայէլ — Միացեալ

Նահանգներ կապերը այս տարողութեամբ նախանշ չէին արձանագրած: Մեկնաբաններէն մէկը «Ետիոթ Սիրոնոթ»ի մէջ կը գրէր, որ Սեպտեմբեր 11էն ի վեր, ամերիկացիները ունեցած են մօտաւորապէս վեց հազար զոհ, անոնք կը դիմագրաւեն տնտեսական դժուարութիւններ, անթրաքսն ու թալպանները. հետեւաբար, անոնք պատրաստ չեն հանդուրժելու Ծարունը, որ կը մնան ամուր, թէեւ երկու բարեկամները տարակարծիք են պատահականութեան շրջաններու ներխուժումին հարցին նկատմամբ:

Ան դիտել տուաւ, որ ամերիկացիներուն հետ բարեկամութիւնը կը մնայ ամուր, որովհետեւ անիկա իսկական ու մնայուն է: Իսրայէլացի մեկնաբաններ սակայն համակարծիք չեն Ծարունի: Անոնք կ'ըսեն, որ Ծարունի վարչապետ ընտրութենէն ի վեր Իսրայէլ — Միացեալ

ապահովելու համար Աֆղանիստանի դէմ յայտարարած պատերազմին:

Իսրայէլեան ուժերուն հետացումը պահանջեց նաեւ ՄԱԿի յատուկ պատուիրակ թերի Ռոտ Լարսըն, որ կոչ ուղղեց Իսրայէլի՝ բանակը հեռացնելու պաղեստինեան իշխանութեան ենթակայ քաղաքներէն: Լարսըն ըսաւ, որ շրջանը կը գտնուի չափապանց վտանգաւոր հանգրուանի մը մէջ, որուն համար արտակարգ որոշումներ ու միջոցառումներ անհրաժեշտ են:

ՄԱԿի անդամ երկիրներ Ապահովութեան Խորհուրդի արտակարգ նիստ մը պահանջած են քննարկելու համար պաղեստինեան շրջաններուն իրավիճակը:

ԲԱԽՈՒՄՆԵՐԸ ԿԸ ԸԱՐՈՒՆԱԿՈՒՆ

Այսրորդանան գըտ-

Ծար.ը՝ Էջ 9

ՇԵՇՏԵԼՈՎ, ՈՐ ՄԻԱՅԵԱԼ ՆԱՅԱԳՆԵՐՈՒ ԴԵՍ ՊԱՏԵՐԱԶՍԸ ՊԻՏԻ ԸԱՐՈՒՆԱԿՈՒ

ՈՒՍԱՄԱ ՊԸՆ ԼԱՏԵՆ ՊԻՏԻ ԶԱՐՏԱՅԱՆՁՆՈՒԻ

ԿԸ ՎԵՐԱՀԱՍՏԱՏԵ ԹԱԼԵՊԱՆ ԸԱՐԺՈՒՄԸ

Ամերիկեան օդանաւերը երէկ շարունակեցին ռմբակոծել Աֆղանիստանի մէջ իշխող թալիբանի իսլամական շարժումի դիրքերը ու Հիւսիսային Դաշնակցութեան հետ պատերազմական ճակատի առաջին գիծերը, ուր «սխալմամբ» ռմբակոծումի թիրախ դարձան նաեւ ոչ զինւորական շրջաններ՝ Սաւային մինչ ռմբակոծումը կը շարունակուէր, աֆղան ընդդիմադիր աքսորեալ ղեկավար մը կոչ ուղղեց շուտով աւարտելու զինուորական գործողութիւնները:

Սայէտ Ամէտ Կայլանի, որ կը խօսէր աֆղան ընդդիմադիր ուժերուն չնդհանումի մը ընթացքին, ըսաւ, որ աշխատանք պէտք է տարուի թալիբաններու ու Ուսամա Պեն Լատէնի դէմ պատերազմը շուտով աւարտելու, որպէսզի ձեռնարկուի Աֆղանիստանի վերակառուցման: Կայլանի, որ Աֆղանիստանի նախկին թագաւոր Ջահիր շահին հետ սերտ կապեր ունի, կոչ ուղղեց թալիբանի շարքերուն մէջ չափաւորականներու, որ միանան Հիւսիսային Դաշնակցութեան, միասնաբար կերտելու համար խաղող Աֆղանիստան մը:

Կայլանի աւելցուց, որ նախկին թագաւորին հետ համաձայնած է կազմել նոր կառավարութիւն մը, որուն նախարարները ըլլան մասնագէտներ: Թագաւորին հսկողութեան ներքեւ անոնք պի-

տի մշակեն իսլամական սահմանադրութիւն մը Աֆղանիստանի համար: Ան յայտնեց նաեւ, որ փոխանցման հանգրուանի կառավարութեան օրերուն ՄԱԿի Ապահովութեան Խորհուրդը միջազգային խաղաղարար

ուժեր պէտք է ուղարկէ:

ՊԸՆ ԼԱՏԵՆ ԶԱՆՁՆԵԼՈՒ ԸԱՒԱՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԶԱՅ

Մինչ ընդդիմադիր ուժերը կը խորհրդակցէին

Ծար.ը՝ Էջ 3

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅ ԴԱՏԻ

ՅԱՆՁՆԱԽՈՒՄԸ ՊՈՒՇԵՆ ԿԸ ՊԱՀԱՆՁԷ

ԶՋՆՁԵԼ 907 ՅՕԴՈՒԱԾԸ

Ամերիկայի Հայ Դատի Յանձնախումբը վերջերս պատրաստած էր Միացեալ Նահանգներու նախագահ ձորճ Պուշի յղուելիք նամակ մը, որուն մէջ նախագահէն կը պահանջէր պահպանել Ապրայճանի ամերիկեան օժանդակութիւններ արգիլող թիւ 907 Յօդուածը: Պուշի վարչակապը եւ կարգ մը քնկրեսականներ, օգտուելով 11 Սեպտեմբերէն ետք ստեղծուած միջազգային իրավիճակէն, կը փորձեն ջնջել թիւ 907 Յօդուածը:

«Գիտակցելով, թէ Հայաստանի հանդէպ Թուրքիոյ եւ Ապրայճանի կողմէ կիրակրող միացեալ շրջափակումը քանդիչ ազդեցութիւն ունեցած է Հայաստանի տնտեսութեան վրայ, եւ գիտնալով, որ թիւ 907 Յօդուածը մեծ դեր ունեցած է ապերիական յարձակողապաշտութիւնը սանձելու մէջ, մենք մտաւոր ենք կառավարութեան եւ կարգ մը քնկրեսականներու կողմէ այս օրէնքը ջնջելու, տկարացնելու կամ առկախելու փորձերուն առնչութեամբ», կ'ըսէ Հայ Դատի Յանձնախումբին նամակը:

Նամակը կ'եպրափակէ, նշելով, որ ամերիկահայ զաղուրք միակամ է այս հարցին առնչութեամբ եւ պիտի կրքանցնէ կառավարութեան հանդէպ իր վստահութիւնը, եթէ թիւ 907 Յօդուածի առնչութեամբ ոչ նպաստաւոր որոշում մը տրուի:

Հայ Դատի Յանձնախումբին պատրաստած նամակին տակ ստորագրած են Ամերիկայի մէջ գործող հայկական հետեւեալ 17 քաղաքական, կրօնական, մշակութային եւ մարդասիրական

Ծար.ը՝ Էջ 3

ՇԵՒԱՐՏՆԱԾԷ ԱՒԱՐՏԵՑ

ՀԱՅԱՍՏԱՆ ԻՐ ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆԸ



Այցելութիւն՝ Ծիծեռնակաբերդ:

Հայաստան կատարած իր պաշտօնական այցելութեան ժիրէն ներս, Վրաստանի նախագահ Էտուարտ Շեւարտնաժէ երէկ այցելեց Ալգային Ժողով, ուր հանդիպում ունեցաւ խորհրդարանի նախագահ Արմէն Խաչատրեանի, խորհրդարանի մշտական յանձնաժողովներու նախագահներուն եւ խմբակցութիւններու ղեկավարներուն հետ:

Հանդիպումին ընթացքին, Արմէն Խաչատրեան նշեց, որ ժամանակն է, որ հայ-վրացական յարաբերութիւններու առնչութեամբ առնուին աւելի գործնական քայլեր: Խաչատրեան անդրադարձաւ Հայաստանի շրջափակման առկայութեամբ տնտեսական անվտանգութեան տեսակէտէն փոխադրամիջոցներու մարպէն հայ-վրացական յարաբերութիւններու կարեւորութեան: Խաչատրեան նաեւ նշեց, թէ բարեկամութեան, համագործակցութեան եւ փոխադարձ անվտանգութեան համաձայնագիրը եւ միջպէ

Ծար.ը՝ Էջ 3

ՔՈՉԱՐԵԱՆ ԸՆԴՈՒՆԵՑ

ՄԻՆՍՔԻ ԽՄԲԱԿԻ

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՄԱՆԱԽԱԳԱՀԸ

Հայաստանի նախագահ Ռոպէրթ Քոչարեան երէկ ընդունեց ԵԱՀԿի Մինսքի խմբակի ամերիկացի նախագահ Ռոտուլֆ Փերինան:

Հանդիպումին ընթացքին նախագահ Քոչարեան նշեց, թէ Լեռնային Ղարաբաղի տազնապին խաղաղ լուծումը կը մնայ Հայաստանի ղեկավարութեան ամենէն հիմնական առաջնահերթութիւններէն մէկը: Նախագահը յայտնեց, թէ տազնապը ԵԱՀԿի Մինսքի խմբակի միջոցով լուծելը հակամարտութեան ամենէն աւելի ընդունելի տարբերակն է:

Իր կարգին, Փերինա տեղեկացուց, թէ Մինսքի խմբակի համախաղաղանքը մօտ օրէն Լիզպոնի մէջ պիտի ունենան հանդիպում մը, քննարկելու համար խաղաղութեան գործընթացի ներկայ իրավիճակը: Համախաղաղանքը Նոյեմբերին այցելեցին չըլնա:

Լարգորդներուն հետ հանդիպումի մը ընթացքին Փերինա յայտնած է, թէ Միացեալ Նահանգներ հատարած կը մնան Լեռնային Ղարաբաղի տազնապին խաղաղ լուծման: Անդրադառնալով թիւ 907 Յօդուածին, Փերինա ըսած է, թէ «Թիւ 907 Յօդուածի վերացումը ոչ մէկ ձեւով ազդեցութիւն կ'ունենայ Լեռնային Ղարաբաղի տազնապի լուծման վրայ»:

ԵՐՐՈՒՈՐԸՂԱՐԱՆԻ ՆԻՍՏԻՆ

ԹՈՒՐԳԻՈՅ ԿՈՉ՝ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ

ՀԱՅԿԱԿԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ

Եւրոխորհրդարանի երկուսն լիազումար նիստի ընթացքին քննարկուեցաւ Եւրոպական Միութեան անդամակցութեան առնչութեամբ Թուրքիոյ արձանագրած բարեփոխումներու թղթածրարը: Թրքական «Հիւրիյիթ» թերթը յայտնեց, որ խորհրդարանականները Հայկական Ցեղասպանութեան ճանաչումը ընդունած են իբրեւ նախապայման Թուրքիոյ Եւրոպական Միութեան անդամակցութեան համար:

Թուրքիոյ շուրջ Եւրոխորհրդարանի այս տարւան տեղեկագիրը պատրաստած էր Ֆրանսացի խորհրդարանական Ալէն Լամատուր: Լամատուր, հակառակ Եւրոխորհրդարանի անցեալ տարուան տեղեկագիրին, իր տեղեկագիրէն դուրս ձգած էր Թուրքիոյ կողմէ Հայկական Ցեղասպանութեան ճանաչումի պատրաստութիւնը:

Երկուսն նիստին ընթացքին Լամատուրի տեղեկագիրին մէջ փոփոխութիւն կատարուած է, եւ անոր մէջ նշուած է. «Կոչ կ'ընենք Թուրքիոյ ընդունիլ 1915ի Հայկական Ցեղասպանութիւնը» նախադասութիւնը: Ժողովը նաեւ ընդունելով Ֆրանսայի ներքին գործոց նախարար Ծարլ Փաքրուայի առաջարկը, Թուրքիայէն պահանջած է քաղաքական եւ դիւանագիտական երկխօսութիւն սկսիլ Հայաստանի հետ:

ՀԱՅԱՍՏԱՆ ԵՒ ՍՓԻՒՌՔ ՄԻԱՍԻՆ ՊԵՏՔ Է ԳՈՐԾԵՆ

ՇԵՇՏԵՑ ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ

Կիպրոսի Հայոց թեմի 1700ամեակի եզրափակիչ հանդիսությունը նախագահելու համար Նիկոսիա ժամանած Արամ Ա. կաթողիկոսը Կիպրոսի, 21 Հոկտեմբերին նախագահեց գաղութի պաշտոնական ընդունելությունը:

Հոծ թիվով ներկաներով եւ պաշտոնական հրաւիրեալներով ուղղելով իր խօսքը, Արամ Ա. չեղտեց միասնականություն կարեւորությունը ամեն մակարդակներում վրայ՝ թեմական, ազգային եւ յատկապէս Սփիւռք — Հայաստան:

Խօսելով մեր ժողովուրդի միասնականություն մասին Արամ Ա. րտաւ. «Միասնականությունը սրբութիւն է, գործ ամէն մակարդակի վրայ պէտք է պահենք առողջ ու վեր մեր անհատական շահերէն»: Շեղտելով Սփիւռք-Հայաստան գործակցութիւնը, անուանելով «Սփիւռք կայ, մասնակցելու համար հայրենաշինություն», ո՛չ թէ միայն տալու, այլ՝ մասնակցելու»:

Հովուապետական այս այցելությունը առիթով, վեհափառ Հայրապետը Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսություն Ս. Մեսրոպ Մաշտոցի չեանշանով պատուեց Հայ կրթություն ու մշակութիւն վաստակաւոր մշակներ՝ Նարեկ Ազգ. Վարժարանի նախկին տնօրէն վարդան Թաշճեանը, նոյն վարժարանի վաստակաւոր ուսուցչուհի Անահիտ Էսկիճեանը, Մելգոնեան կրթական Հաստատություն տնօրէնուհի Անի Լաչինեանը եւ հայ գիրի սպասաւոր Յարութիւն Անմահուհին:

Կիպրոս իր կեցությունը օրերուն, վեհափառ Հայրապետը հանդիպումներ ունեցաւ նաեւ ազգային զբաղմունք կազմակերպություններում ու միություններում ներկայացուցիչներուն հետ:

ՆԱԽԱՐԱՐ ՅՈՎՆԱՆԵԱՆ ԱՅՅԵԼԵՑ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ

Երիտասարդություն եւ մարմնակրթություն նախարար Սեպուհ Յովնանեան երէկ այցելեց Խորհրդարանի նախագահ Նեպիհ Պրերիին:

Նախարար Յովնանեան երէկ ընդունեց Լիբանանի պաշտօնակալի ֆետերասիոնի նախագահ Ժան Համամն ու ընդհանուր քարտուղար Ռուպի Սպուր Ապուտալան, որ յայտարարեց, թէ համաձայնած են մարզիչներու դասընթացին, օտար խաղողներուն, հաւաքականի պատրաստութեան եւ այս մարզաձեւին կապուած ալ հարցերու շուրջ, եւ նախարարը դուրստած է ֆետերասիոնի գործունէությունը:

«Նախարար Յովնանեան պատրաստակամութիւն յայտնեց օժանդակելու ազգային խումբին ալ երկիրներում մէջ մարզումի բանակումներու կազմակերպման եւ ալ յախտանքներու, առ ի պատրաստութիւն ինտիանափոխի մէջ կայանալիք պաշտօնակալի աշխարհի արդիւններուն մրցումներուն», ըսաւ ան:

Նախարար Յովնանեան երէկ նաեւ ընդունեց Քաթարի դեսպան Ապտալա Մուհամէտ Խաթէրը: Քննարկուեցան երկկողմանի յարաբերությունները:

ՊԱԹՐՈՒՆԻ ԴԵՊՔԻՆ ՄԱՍԻՆ ԼՈՒՐՋ ՏՈՒԵԱԼՆԵՐ ԿԱՆ

ԿՐՍԷ Է. ՄՐՐ

Ներքին գործոց նախարար Էլիաս Մըր երէկ այցելեց ներքին ապահովութեան ուժերու ընդհանուր տնօրէնությունը կեդրոնատեղի, ուր ժողովներ գումարեց ապահովություն պատասխանատուներու հետ:

Այս ժողովներուն ընթացքին Մըր հաստատեց, որ Լիբանանի մէջ տիրող ապահով մթնոլորտը աշխարհի լաւագոյններէն է եւ տիրող քաղաքական մթնոլորտին ու Սուրիոյ հետ որդեգրուած ուղեգիծի կողքին, ապահովա-

կան կայունությունը նաեւ արդիւնքն է նախագահ Պրէմիէր Լահուտի կեցուածքին, որ հաւասար հեռաւորություն վրայ կը կանգնի բոլոր լիբանանեան կողմերէն ու համայնքներէն:

«Այս ոճին շնորհիւ պետությունը, ապահովություն ուժերն ու բանակը յաջողեցան առանց քաղաքական ու համայնքային միջամտություններու հետապնդել ու լուծել ապահովություն հարցերը», ըսաւ Մըր հաւաստեալով, որ ինք կրնայ հրա-

հանգ տալ ձերբակալելու Լիբանանի որեւէ շրջանի մէջ ունէլ յանցագործ առանց հաշուի առնելու այդ շրջանի գունաւորումը:

Նախարարը նաեւ յայտնեց, որ բոլոր ապահովություն մարմինները կատարեալ համակարգուածով կ'աշխատին քողազերծելու վերջին ապահովական խախտումներու մանրամասնությունները. ան ալ նարկություն կատարեց, թէ Պաթրոնի հրդեհին մասին լուրը տուեալներ կան:

ՎԱՐՉԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒՄՆԵՐՈՒՆ ԶԵԻՆ ՇՈՒՐՋ ՀԱՄԱԶԱՅՆՈՒԹԻՒՆ ԳՈՅԱՑԱԾ Է

Նախագահ Պրէմիէր Լահուտ երէկ ընդունեց Խորհրդարանի նախագահ Նեպիհ Պրերին:

Հանդիպումէն ետք, Պրերի յայտարարեց, որ պետական վարչություններում եւ հաստատություններում մէջ նշանակումին գործընթացը թեկնածուներու անուններու քննարկումին հանգուանը, եւ թէ ինք այս հարցը չէ քննարկած նախագահ Լահուտի հետ:

Պրերի նաեւ ըսաւ, որ համաձայնություն գոյացած է այս նշանակումները կատարելու ձեւին շուրջ:

«Տեղական եւ արտաքին հարցերը քննարկելու ընթացքին հաստատուեցաւ անհրաժեշտութիւնը՝ թափ տալու երկրի բարգաւաճման ճիգերուն, յատկապէս Աքքարի եւ Պեքաւայի պարագային, որովհետեւ պետք է ապահովել այդ շրջաններում արտերու ուղեգծին միջոցները, ինչպէս որ անհրաժեշտ է փութացընել կայունութեան սահմաններում ճշգրտումն ու գրանցումը, որպէսզի հողագործը կարենայ անհրաժեշտ պահուն դրամատունէ փոխառություններն ստանալ», յայտնեց ան:

Պրերի յիշեցուց, որ այս աշխատանքը կատարելու ուղղութեամբ բազմաթիւ որոշումներ տրուած են անցեալին եւ պետական պիւտճէներում մէջ նախատեսուած է անոր անհրաժեշտ գումարներու յատկացումը:

բայց ցարդ ոչինչ գործադրուած է, թէեւ նման ծրագիր մը հաւասարակշռուած բարգաւաճումի նախաքայլ պիտի հանդիսանայ:

Միւս կողմէ, Խորհրդարանի նախագահ Նեպիհ Պրերի երէկ երեսփոխաններու հետ իր ունեցած հանդիպումներուն ընթացքին յայտնեց, որ պետական պաշտոնեաներում նշանակումներուն սկզբունքներուն եւ ձեւին շուրջ համաձայնություն գոյացած է:

Պրերի բացատրեց, որ համաձայնութեան գործընթացին հիմամբ, իւրաքանչիւր նախարար, եթէ կը փափաքի փոխել նախարարություններ ընդհանուր տնօրէնը, կ'առաջարկէ երեք կամ չորս թեկնածուներու անունները, որոնք կը փոխանցուին պետական պաշտոնէութեան հարցերու խորհուրդին, որպէսզի ան տայ իր կարծիքը. այնուհետեւ վերջնական որոշումը կու տայ նախարարաց խորհուրդը:

Այս նշանակումներու հարցին մօտ օրէն լուծման գծով իր ակնկալություններուն մասին՝ Պրերի ըսաւ, որ ըստ իր ունեցած տեղեկություններուն, այս գործընթացն ու սկզբունքները պիտի որդեգրուին նախարարաց խորհուրդի (այսօրեւան) նիստին, ապա պիտի կատարուին նշանակումները:

«Կառավարությունը բախտաւոր է, որովհե-

տեւ մարդիկ նշանակումներու հարցով կամ ԱՖ-դանիստանի իրադարձություններով տարուած մոռցած են տնտեսական տաքնապի ցաւալի իրականությունները, բայց մենք կը շարունակենք յուսալ, որ առաջնահերթություններ կը տրուի այս հարցերու լուծումին», ըսաւ ան:

Միջազգային զարգացումներուն, շրջանային տաքնապին վրայ անոնց անդրադարձներուն ու պաշտօնիցիներուն դէմ իսրայէլեան վարագուծութեանց մագլցումին մասին՝ Խորհրդարանի նախագահը հաստատեց, որ պատմություն մէջ այսպիսի առիթ չէ ներկայացած արաբներուն աշխարհին պարտադրելու պաղեստինեան հարցի բանաձայն լուծումը, բայց անոնք կը կորսնցընեն զայն: «Նոյնպէս պատմությունը չէ տեսած ազգ մը, որ արաբներուն այսօր քրածին պէս ձրիորէն կը զիջի իր իրաւունքները. բարեբախտաբար առիթը տակաւին չէ կորսուած եւ արաբները անհրաժեշտ են միջազգային ընտանիքի եւ ուժերու ԱՖդանիստանի գծով ծրագրերուն իրականացումին համար, եւ եթէ արաբները ձրիաբար կատարուող գիշումներուն վերջ չդնեն, ապա փոթորիկը անբաղձալի ներքին փոթորիկներ պիտի պատճառէ արաբական աշխարհէն ներս», բացատրեց Պրերի:

ԴԵՍՊԱՆ ՆԱԽԱՐԱՐԻՆԵԱՆ ԱՅՅԵԼԵՑ ՆԱԽԱՐԱՐ ՀԱՄԱՐՈՒՏԻ



Արտաքին գործոց նախարար Մահմուտ Համմուտ երէկ ընդունեց Լիբանանի մէջ Հայաստանի դեսպան Արման Նաւասարդեանը:

Հանդիպումին քննարկուածի առարկայ դարձան միջազգային եւ շրջանային վերջին զարգացումները, ինչպէս նաեւ Լիբանան — Հայաստան յարաբերությունները:

ՆԱԽԱՐԱՐ ՀԱՄԱՐՈՒՏ ԿԸ ՀԵՐՔԷ

Արտաքին գործոց եւ արտերկրի լիբանանցիներու հարցերու նախարար Մահմուտ Համմուտ երէկ հերքեց այն տեղեկությունները, թէ Միացեալ Նահանգներ պաշարաւորութիւն կամ պոշտացում ուղղած են Լիբանանի, հարաւի մէջ վերջին բախումներուն պատճառով: «Ճշմարտութեան նոյնիսկ նշոյլ մը չկայ այս տեղեկություններուն մէջ. Միացեալ Նահանգներ պարպապէս նկատել տուած են, որ շրջանային պայմանները շատ նուրբ են եւ կոչ ուղղած՝ հանդարտեցումի եւ ինքնապաշտպանի», ըսաւ ան:

Միւս կողմէ, արտաքին գործոց նախարարութիւնը ՄԱԿի մէջ Լիբանանի ներկայացուցչութեան յղեց անցեալ ամիս Իսրայէլի կողմէ Լիբանանի օդային, ցամաքային եւ ծովային սահմաններու խախտումներու ցանկը եւ ՄԱԿի մէջ Լիբանանի դեսպան Սելիմ Թատուրիէն պահանջեց վայն յանձնել կապակերպութեան:

ՏԸ ՄԻՍԹՈՒՐԱ ԿԸ ՔՆՆԱԴԱՏԷ ԻՍՐԱԷԼԵԱՆ ՈՏՆՁԳՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Լիբանանի մէջ ՄԱԿի տեղեկատու գրասենակը երէկ հաղորդագրութեամբ մը յայտարարեց, որ հարաւի մէջ ՄԱԿի ընդհանուր քարտուղարի ներկայացուցիչ Սթեֆան Տը Միսթուրա դիտել տուած է, որ Երկուշաբթի օր Իսրայէլեան օդանաւեր ինք անգամ խախտած են Լիբանանի օդային սահմանը եւ հիւսկ անգամ՝ երեքշաբթի օր:

Այսպիսի արարքներ չեն օգնել արդէն յարուած կացութեան վատթարացումէն խուսափելու ձգտելու, ըսաւ Տը Միսթուրա՝ կոչ ուղղելով բոլոր կողմերուն հրաժարելու Կապուտ Գիծի խախտումէն եւ յարգելու վայն:

Միւս կողմէ, հարաւի մէջ գործող ՄԱԿի խաղաղամիտութեամբ բանքեր թիմուր Կեօքսէլ յոյս յայտնեց նաեւ Լիբանան — Իսրայէլ սահմանագիծին վիճակը հաշուարկելու հոլորս չի գար: Գետնի վրայ կացութեան լուրջ վատթարացում չեն տեսներ, եւ Իսրայէլացիներ յայտարարած են, թէ մագլցում չեն ցանկար, իսկ Ֆիլիստինի ոչ մէկ ձիգ կը խնայէ վայրագութեանց մագլցումը կանխարգիւելու համար:

ԵԼԵԿՏՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ Վ. ԽՈՐՀՈՒՐԴԻ ՆԱԽԱԳԱՐՉ ԶՐԱԺԱՐԵՑԱՒ

Ելեկտրականութեան ընկերութեան վարիչ խորհուրդի նախագահ Յուսէպ Համմուտ երէկ իր հրաժարականը ներկայացուց ուժանիւթի նախարար Մոհամէտ Ապուլ Համիտ Պալտունի, նկատել տալով, որ կուտակուած դրամական եւ վարչական բարդութիւններ անկարելի դարձուցած են ընկերութեան հարցերու լուծումը, անկախաբար այդ ուղղութեամբ աշխատող անձերուն կարողութիւնէն:

Նախարար Պալտուն ըսաւ, որ Համմուտի այս քայլին նպատակն է դիւրացնել աշխատանքը եւ ցուցաբերել բարի կամեցողութիւն, իսկ կառավարութիւնը ունի նոր տարրեր, որոնք կրնան իր քաղաքականութեան ծիրէն ներս լուծումներ տալ այս հարցերուն:

ՎԱՌԵԼԱՆԻԹԵՐՈՒ ՆՈՐ ՄԱԿԱՑՈՅՑ

Ուժանիւթի նախարար Մոհամէտ Ապուլ Համիտ Պալտունի երէկ ի Կորն դարձած որոշումով 500 Լ. ոսկիի նուազում կրեցին պենսիոնի գինը, մինչ մարտի գինը 300 Լ. ոսկիի նահանջ արժանազտեց:

Նոր սակերն են.
98 օքթան պենսիոնի թիթելը 17,900 Լ. ո.
92 օքթան պենսիոնի թիթելը 17,700 Լ. ո.
Առանց կապարի (95 օքթան) պենսիոնի թիթելը 16,900 Լ. ո.
Առանց կապարի (90 օքթան) պենսիոնի թիթելը 16,700 Լ. ո.
Մալուրի թիթելը 6,900 Լ. ո.
Քարիւղի թիթելը 7,300 Լ. ո.

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Մանասէ, Պետրոս, Գօգօ, Բաֆֆի, Օովիկ եւ Արաիւն Բէշիշեաններ իրենց շնորհակալութիւնները կը յայտնեն բոլոր անոնց, որոնք անձամբ, ծաղկեպսակով, նուիրատուութեամբ եւ հեռագիրով մասնակից եղան իրենց մօր եւ հարապատին՝ ՄԱՐԻԱՍ ԲԷՇԻՇԵԱՆԻ մահուան անգին:

ԾԱԽՈՒ ՅԱՐԿԱՐԱԾԻՆ

●Պորճ Դամուտ, Սար Եուսէֆ Եկեղեցիի փողոց, Ա. յարկ, 3 սենեակ եւ յարմարութիւններ: Հեռ. 01/264967, 03/605358:

STUDIO
Lantern
●Կը ստանձնէ ուրախ առիթներու video
ճկարահանումներ
Հեռ. 01-268866
եւ 03-995399

ԸԱՐՍԱՆԵԿԱՆ ԸՐԱԲԵՐ

ՏԵՐ ԵՒ ՏԻԿԻՆ ՓԱՆՍ ՂԱԶԱՐԵԱՆ
ՏԻՍՐ ԱԲԱՐԱՄ ՂԱԶԱՐԵԱՆ

Սիրով կը հրաւիրենք ազգակամներն ու բարեկամները ներկայ գտնուելու իրենց որդւոյն եւ դստեր՝

ՅՈՎԻԿԻ ԵՒ ՖԵՐԻՏԱՅԻ

Ս. Պաակի խորհուրդին, որ տեղի պիտի ունենայ Կիրակի, 28 Հոկտեմբեր 2001, կեսօրէ ետք ժամը 5:00ին, Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ, Բեսապ:

Կըցահարութեամբ՝
ՏԵՐ ԵՒ ՏԻԿԻՆ ՐԱՖԻՔԻ ՂԱԶԱՐԵԱՆԻ

- Ներկայս ընդունիլ իրեն անձնական հրաւեր:
- Ծնորհանդիսներ ընդունիլ վրայ:
- Ընդունելութիւն ժամադրութեամբ, հեռ. 710321:

Tig: GHАЗARIAN - KESSAB LATTAKIA SYRIA

ԸԱՅ ԳԻՐԷԻ ՏԱՐԵԿԱՆ

ԶԵՂԶ - ԿԱՃԱՌԷ

ՅՈՒՑԱԸԱՆԴԵՍ

17 ՆՈՅՏԵՄԲԵՐ - 2 ԴԵԿՏԵՄԲԵՐ
ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԵՆ ՆԵՐՍ

ԸԱՅԱՍՏԱՆԻ ԸԱՆՐԱՅԻՆ ԸՆՈՒՏԵՍԻԼԵՆ

Կիրակի, 21 Հոկտեմբեր, կեսօրուան ժամը 1:30ին, Հայաստանի պատկերասփիւռի կայանէն դիտեցէ Շուշիի «Վարանդա» եւ Լիբանանի Համագայիսի «Բարսէլ Կամաչեան» երաժշտական քոլէճի «Վարկայ» երգչախումբի Երեւանի միացեալ համերգը, ղեկավարութեամբ Զաքար Բէշիշեանի:

L'ASSOCIATION ARMENIENNE "HAMAZKAINE" POUR L'EDUCATION ET LA CULTURE

Présente

LE PIANISTE

AREK SARKSIAN

Au programme
GOMIDAS, BABAJANIAN, MIRZOYAN, CHOPIN, RACHMANINOV

Dimanche le 4 Novembre 2001 à 20:00 heures à la salle Siran
Manouguian, Debbayé.

Invitation

ԱՊԱՀՈՎ ԶԳԱ՝

Հասցէ՝ ԱՖԵՏ-ի Ծէք
Բ Յարկ - Պորճ Համուտ
Հեռ: 01 242556 - 242557

ԱՖՀԻԼ AFHIL

ՈՒՍԱՄԱ ՊԸՆ ԼԱՏԷՆ...

Շարունակում Ա. ԷջԳ

Աֆղանիստանի ապագայի մասին, Փաշտաունի մէջ թալեպաններու դեպքանը՝ մոլլա Ապտէլ Սալամ Զաէֆ վերահաստատեց, որ իսլամական շարժումը պիտի չհարախանձէ Պըն Լատէնը՝ խոստանալով պատերազմը շարունակել բոլոր աֆղանները զոհելու դժոյժ:

Զաէֆ, որ կը խօսէր իսլամապատի մէջ, ըսաւ, թէ Աֆղանիստան պատրաստ է Միացեալ Նահանգներու վրայ յարձակելու, եթէ միջոցն ու կարելիութիւնները ունենար: Ան աւելցուց, որ թալեպանները ամերիկացիներ պիտի սպաննեն՝ լուծելու համար վրէժը սպաննուած աֆղաններուն: Զաէֆ չեշտեց, որ Պըն Լատէնը պիտի չյանձնեն, որովհետեւ թալեպանները ունին օրէնքներ ու կը յարգեն Աֆղանիստանի արժանապատուութիւնն ու մշակոյթը, որոնց մաս կը կազմեն այդ օրէնքները:

Քապուլի իշխանութիւնները կ'ըսեն, որ Հոկտեմբեր 7էն ի վեր, ամերիկեան ուժերն ու հրթիրները աւելի քան հազար զոհեր խլած են: Անոնք կ'ըսեն նաեւ, որ քաղաքային զոհերուն թիւը մեծ է: Ուաշինկթըն երէկ ընդունեց, որ Երեքշաբթի գիշերուան ռմբակոծումներուն «սխալմամբ» թիրախ դարձած են քաղաքայիններով բնակուած շրջաններ: Ամերիկեան օդանաւեր երէկ թիրախ դարձուցին յատկապէս՝ թալեպաններու եւ Հիւսիսային Դաշնակցութեան ուժերու ճակատումի առաջին գիծը՝ աւելի ծանր վնասներու ենթարկելու համար թալեպանները:

ԹՈՒՐԵԱ ՊԱՏՐԱՍ Է ԸԻՐԸՆԿԱՆԵՆՈՒ ԸՆԴԴԻՍԱԳԻՐ ՃԱԿԱՏԻ ԸՆԴԴԻՊՈՒՄ ՍԸ

Թուրքիա երէկ յայտարարեց, որ պատրաստ է հիւրընկալելու աֆղան ընդդիմադիր թեւերու հանդիպում մը, որ պիտի քննարկէ Աֆղանիստանի ապագան ու նոր կառավարութեան մը կառուցը:

Արտաքին գործոց նախարարութեան բարձրաստիճան պաշտօնատարներ ըսին, որ Հիւսիսային Դաշնակցութեան շարժումները եւ նախկին թագաւորին ներկայացուցիչներ առաջարկած են ժողով մը գումարել Թուրքիոյ մէջ: Նախարարութեան բանբերը Հիւսէյն Տիրիոզ ըսաւ, որ Անգարա կ'ողջունէ այս առաջարկը, որովհետեւ համոզուած է, թէ նման հանդիպում մը չհակահարկէ ու արդիւնաւէտ:

● **ԼԻՊԻՈՅ** ղեկավար Մուամմար Քադաֆի «սահմակցուցիչ» որակեց Սեպտեմբեր 11 յարձակումները Նիւ Եորքի ու Ուաշինկթընի դէմ: Ան կողմ ուղղեց միջազգային խորհրդածողովի մը, ուր պէտք է համաձայնիլ ահաբեկչութեան սահմանումին մասին, ու ապա՝ խորհրդակցիլ անոր դէմ, պայքարելու միջոցներուն մասին:

(ՌՈՅԹԸՐԸ)

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅ ԴԱՏԻ ...

Շարունակում Ա. ԷջԳ

կազմակերպութիւնները. Հայ Կաթողիկէ Միութիւնը, Հիւսիսային Ամերիկայի Հայ Աւետարանական Միութիւնը, Ամերիկայի Հայ Միսիոնարական Ընկերակցութիւնը, Հայ Առաքելական Եկեղեցւոյ Արեւելեան Ամերիկայի թեմը, Հայ Առաքելական Եկեղեցւոյ Արեւմտեան Ամերիկայի թեմը, Արեւելեան Ամերիկայի Հայ Առաքելական Եկեղեցւոյ առաջնորդարանը, Արեւմտեան Ամերիկայի Հայ Առաքելական Եկեղեցւոյ առաջնորդարանը, Ամերիկահայ Դեմոկրատականներու Նախագահ Խորհուրդը, Հայ Իրաւաբաններու Միութիւնը, Հայ Բարեգործական Ընդհանուր Միութիւնը, Ամերիկայի Հայ Դատի Ցանձնախումբը, Հայ Օգնութեան Միութիւնը, Հայ Տեխնասարդաց Դաշնակցութիւնը, Համազգային Հայ Մշակութային եւ Կրթական Միութիւնը, Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութիւնը, Վարդանի Ապտէտներ Միութիւնը, Հայ Հանրապետականներու Ազգային Կազմակերպութիւնը:

(ՌՈՅԹԸՐԸ)

ԿԻՊՐՈՍԻ ՏԱԳՆԱՊԻՆ ԵԿԱՏՐՈՒՄ

ԱՆԳԱՐԱ ՅԱԲԵԼԵԱԼ ԺԿՈՒՆՈՒԹԻՒՆ ՊԵՏԸ Է ՑՈՒՑԱԲԵՐԻ

Եւրոպական Միութիւնը ողջունեց անդամակցութեան թեկնածու Թուրքիոյ կատարած սահմանադրական կարգ մը բարեկարգումները, կողմ ուղղելով սակայն, որ Անգարա յաւելեալ ճկունութիւն ցուցաբերէ կիպրոսի հարցին հանդէպ:

Թուրքիոյ խորհրդարանը վերջերս վաւերացուց բարեկարգումներու ծրագիր մը, որ կը մեղմացնէ քրտեքէնի գործածութեան դէմ հաստատուած կաշկանդումները: Բարեկարգումներուն շարքին որոշուեցաւ նաեւ նուազագոյնի իջեցնել առանց

ամբաստանագիրի կաշկանքի տակ պահուելու պարագաները, ինչպէս նաեւ՝ դժուարացնել քաղաքական կուսակցութիւնները արգելելու որոշումները, որոնք նախապէս դիւրութեամբ կը տրուէին:

Եւրոպական Միութեան ընթացիկ նստաշրջանին նախագահ Պեյճիքայի կողմէ հրապարակած յայտարարութիւն մը ողջունեց ու գնահատեց խորհրդարանին վաւերացուցած բարեկարգումները: Ծրագիրը ծրագրելու կ'աւտարարու թիւնը կ'աւելցնէր, որ Եւրոպական Միութիւնը կողմ

Կ'ԸՍԵ Ե. ՄԻՈՒԹԻՒՆԸ

կ'ողղէ Թուրքիոյ շարունակելու բարեկարգումներու ճամբան:

Այլ յայտարարութեամբ մը սակայն Ե. Միութիւնը Թուրքիայէն պահանջեց աւելի ճկուն կեցուածք ցուցաբերել կիպրոսի հարցին հանդէպ: Ցայտարարութիւնը կը նշէր, որ Ե. Միութիւնը յուսաբար է, որովհետեւ Անգարայի հովանաւորութեան ներքեւ գործող Թուրք կիպրացիները կը մերժեն բանակցութեան սեղան վերադառնալ՝ լուծելու համար տագնապը:

(ՌՈՅԹԸՐԸ)

ՇԵՒԱՐՏՆԱԾԷ ԱՒԱՐՏԵՅ ՀԱՅԱՍՏԱՆ ԻՐ ...

Շարունակում Ա. ԷջԳ

տական եւ միջկառավարական այլ պայմանագիրներ երկու երկրներու յարաբերութիւններու խորացման հիմքեր կը ստեղծեն:

Շեւարտնաժէ հանդիպումին ընթացքին յայտնեց, որ Վրաստանի մէջ բնակող հայերու իրավիճակը վրացական իշխանութիւններու ուշադրութեան առարկան է: Շեւարտնաժէ կարեւոր նկատեց իր այցելութեան ընթացքին ստորագրած համաձայնագիրները եւ նշեց, որ այնուհետեւ լուրջ աշխատանք պիտի տարի համագործակցութեան բոլոր մարզերուն մէջ:

Անդրադառնալով շրջանային խնդիրներուն, Շեւարտնաժէ նշեց. «Ես համոզուած եմ, որ հակամարտութիւնները ռազմական լուծումներ պէտք չեն ունենան, ոչ Աբխազիոյ, ոչ Լեռնային Ղարաբաղի եւ ոչ ալ Օսեթիոյ մէջ: Մենք կը հաւատանք խաղաղ լուծման»: Վրաստանի նախագահը շեշտեց, որ Լեռնային Ղարաբաղի եւ Աբխազիոյ տագնապները իրար-

մէ տարբեր տագնապներ են, եւ թէ միջազգային հանրութիւնը կ'ընդունի այս իրականութիւնը: Շեւարտնաժէ ըսաւ, որ անընդունելի է տնտեսական շրջանային մեծ ծրագիրներէն Հայաստանի դուրս ձգուիլը: Շեւարտնաժէ ցուցակցութիւն յայտնեց Աբխազիոյ վերջին դէպքերու ընթացքին սպաննուած հայերու առնչուեց իր այցելութեան:

Նախագահ Շեւարտնաժէ նաեւ այցելեց Երեւանի Պետական Համալսարան, ուր հանդիպում ունեցաւ համալսարանի դասախօսական եւ վարչական կազմին հետ:

«Հայաստանի եւ Վրաստանի հասած են նշանակալի յաջողութեան, երբ համատեղած են ջանքերը՝ գտնելով երկարաժամկէտ փոխ շահաւէտ գործակցութեան մարզեր», ըսաւ Շեւարտնաժէ հանդիպումին ընթացքին: Ըստ Վրաստանի նախագահին, երկու եր-

կիրները ունին համագործակցութեան մեծ ներուժ, որու մէկ անընթաց մասը միայն կ'օգտագործեն ներկայիս:

Հ ա ն դ ի պ ու մ ի ն աւարտին համալսարանի ղեկավարութեան կողմէ Շեւարտնաժէի շնորհուեցաւ համալսարանի պատուաւոր դոկտորի կոչում:

Իր այցելութիւններու ժիրէն ներս Լուրմարտ Շեւարտնաժէ, նախագահ Քոչարեանի ուղեկցութեամբ այցելեց Հայաստանի Ազգային պատկերասրահ, ուր երկու նախագահները բացումը կատարեցին վրացի գծագրիչներու ցուցահանդէսին:

Շեւարտնաժէի գլխաւորած պատուիրակութիւնը նաեւ այցելեց Ծիծեռնակաբերդի եւ ծաղկեպսակ պետեղեց Հայկական Յեղասպանութեան պոհերու յուշակոթողին: Ծիծեռնակաբերդի յուշահամալիրին մէջ Շեւարտնաժէ մասնակցեցաւ աւանդական ծառատնկումի:

ՊՈՒՇԷՆ ՆԱՍՏԱԿՆԵՐ ...

Շարունակում Ա. ԷջԳ

Նամակին մէջ Պուշ շնորհակալութիւն կը յայտնէ Ուաշինկթընի եւ Նիւ Եորքի դէմ ահաբեկչական արարքները դատապարտող Լիբանանի կեցուածքին համար:

Պուշ իր պատգամին մէջ կ'արծարծէ այդ արարքներէն ետք ստեղծուած շրջանային եւ միջազգային վիճակը, ինչպէս նաեւ այս դժուար մարտահրաւէրը դիմագրաւելու համար միջազգային զորակցութեան եւ վճռականութեան անհրաժեշտութիւնը:

ԳՈՐԾԱԾԵՅԷՔ FUEL CARDԸ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԾՐԱԳԻՐՆԵՐՈՒ ՅԱԶՈՂՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

ԻՆՉՊԷՍ ԳՈՐԾԱԾԵԼ FUEL CARD-Ը

Ձեր ինքնաշարժին պենզին, մագնիս, իւղին, ինչպէս նաեւ լուալու համար, վճարումին հետ միաժամանակ ներկայացուցէք FUEL CARD-ը, այս ձեւով ձեր մասնակցութիւնը բերած կ'ըլլաք տնտեսական ծրագիրներու յաջողութեան:

ԻՆՉՊԷՍ ՍՏԱՆԱԼ FUEL CARD-Ը

FUEL CARD-ը կրնաք ստանալ հետեւեալ կեդրոններէն.

- ԱՖՇԻԼի գրասենեակ, Պուրճ Լամուտ
- Շամազգայինի գրախանութ, Պուրճ Լամուտ
- Գրատուն Caravelle, Ջալա
- Գրատուն Sava, Այնճար
- Գրատուն Կոմիտաս, Պէյրութ
- Obelix հաստատութիւն, Անթիպաս

Յաւելեալ մանրամասնութեան համար
հեռաձայնել՝ 01-242556 քիւն:

Մագնիս սպասարկութեան
համար հեռաձայնել՝ 04-715111,
04-715222 եւ 04-715333 քիւն:

ՉԵՉԷՆՆԵՐ Կ'ԱՌԱՋԱՐԿԵՆ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ԲԱՆԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՍԿՍԻԼ

ՄՈՍԿՈՒԱ, 24 (ՌՈՅԹԸՐԸ).- Ռուսիոյ նախագահ Վլատիմիր Փութինի յատուկ բանազնաց Վիքթոր Քապանցեւ Չորեքշաբթի օր յայտնեց, որ չեչէններէն առաջարկ եղած է՝ ռուս պաշտօնատարներու հետ խաղաղութեան բանակցութիւններու սկսելու:

Քապանցեւ յայտնեց, որ չեչէն ծայրայեղականներու ղեկավար Ալյան Մասխատով փափաքած է Կրեմլինի ղեկավարներուն հետ քննարկումներ կատարել վերջին իրադարձութիւններուն մասին եւ Կովկասի մէջ տագնապին վերջ մը դնել:

«Ախմետ Չաքաւ հեռաձայնային խօսակցութեամբ մը փոխանցեց, որ երկար խորհրդակցութիւններէ ետք կ'առաջարկէ Մոսկուայի մէջ քննարկումներ կատարել հիմնուելով Փութինի 24 Սեպտեմբերին կատարած յայտարարութեան վրայ: Ցայտարարութեան մէջ Փութին շեշտած է չեչէն վիճակներու պինտափումը», յայտնեց Քապանցեւ, աւելցնելով, որ հանդիպումը հաւանաբար կայանայ յառաջիկայ 10 օրուան ընթացքին:

Այս տեղեկագիրին մասին սակայն չեչէններու կողմէ հաստատում մը չեղաւ, ինչ որ անյստակ կը դարձնէ, թէ չեչէններ իսկապէս կ'ուզեն խաղաղութեան բանակցութիւններուն սկսիլ:

Ռուսական ուժեր կ'ըսեն, թէ շրջանը իրենց հակակշիռին տակ է, սակայն տակաւին չեչէն ծայրայեղականներու կողմէ յարձակումներ կը կատարուին եւ կը պատճառեն ռուս պինտութիւններու մահը:

«Էիս Մոսկովի» ձայնասփիւղը հաղորդեց, որ Կրոպնիի հարաւարեւելեան շրջանին՝ Շալիի մէջ, ռուս պինտութեան մը սպաննուած է պայթումի մը պատճառով:

«Իթար - Թաս» լրատու գործակալութիւնը յայտնեց, որ ռուսական բանակը անցնող 24 ժամերուն սպաննած է բազմաթիւ չեչէններ:

Քաղաքական մեկնաբաններու կարծիքով, նոյնիսկ եթէ Մասխատով պատրաստ է ռուս պաշտօնատարներուն հետ խաղաղութեան բանակցութիւններուն սկսելու, յստակ չէ, թէ չեչէններու եւ ռուս բանակին միջեւ բախումներ վերջ պիտի գտնեն:

ԼԻԲԱՆԱՆԱԿԱՆ

ԱՏԱՆԱԲՈՒԺՆԵՐՈՒ ՄԻՈՒԹԻՒՆ (ADAL)

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

6 Հոկտեմբեր 2001ին կայացած ընդհանուր ժողովին ընտրուեցաւ նոր վարչութիւն, հետեւեալ կազմով.

Ատենապետ՝ տոքթ. Մորիս Ճանապետեան Փոխ ատենապետ՝ տոքթ. Հրայր Աւագեան Ատենադպիր՝ տոքթ. Սոնա Տեմիրճեան Գանձապահ՝ տոքթ. Յակոբ Լոյսյեան Հաշուապահ՝ տոքթ. Միսաք Ճապրայեան Խորհրդականներ՝ տոքթ. Յովիկ Չապուրեան տոքթ. Ժենի Թովմատեան տոքթ. Արթուր Բարդիբեան տոքթ. Էլսա Սաթմեան տոքթ. Սողոմոն Պողոսեան տոքթ. Մարտիկ Աւետիքեան

Նորընտրի վարչութիւնը իր առաջին նիստին որոշեց իրաքանչիւր ամսուան առաջին Շաբաթ օրերը կազմակերպել կլոր սեղան (Round Table) կէսօրէ ետք ժամը 5:00էն 7:00, Բժշկական Միութեան սրահին ներս, մասնակցութեամբ բոլոր հայ ատամնաբուծներուն: Առաջին հանդիպում՝ 3 Նոյեմբեր 2001:

ՎԱՐՉՈՒԹԻՒՆ



MESROBIAN TECHNICAL COLLEGE


Developers of Human Potential



ICTN International Consulting & Training Network

Thrivng on Change

Now offering



LCCI EXAMINATIONS BOARD

LCCIEB
London Chamber of Commerce & Industry Examinations Board's

Certificates and Diplomas

Mesrobian Technical College

Tel: (01) 260504
Fax: (01) 262955
E-mail: mesrobca@dm.net.lb
Website: www.mesrobian.com



ICTN - The Lebanon Exam Center

Tel: 09 - 217 318 / 9

Get your International Passport to Employment

ԻՆՉՊԷՍ ԳՈՐԾԱԾԵԼ FUEL CARD-Ը

Ձեր ինքնաշարժին պենզին, մագնիս, իւղին, ինչպէս նաեւ լուալու համար, վճարումին հետ միաժամանակ ներկայացուցէք FUEL CARD-ը, այս ձեւով ձեր մասնակցութիւնը բերած կ'ըլլաք տնտեսական ծրագիրներու յաջողութեան:

ԻՆՉՊԷՍ ՍՏԱՆԱԼ FUEL CARD-Ը

FUEL CARD-ը կրնաք ստանալ հետեւեալ կեդրոններէն.

- ԱՖՇԻԼի գրասենեակ, Պուրճ Լամուտ
- Շամազգայինի գրախանութ, Պուրճ Լամուտ
- Գրատուն Caravelle, Ջալա
- Գրատուն Sava, Այնճար
- Գրատուն Կոմիտաս, Պէյրութ
- Obelix հաստատութիւն, Անթիպաս

Յաւելեալ մանրամասնութեան համար
հեռաձայնել՝ 01-242556 քիւն:

Մագնիս սպասարկութեան
համար հեռաձայնել՝ 04-715111,
04-715222 եւ 04-715333 քիւն:



FUEL CARD

**FUEL CARD ԿՐՆԱՔ ՕԳՏԱԳՈՐԾԵԼ
ԵՏԵԻՄԱԼ ԿԱՅԱՐԱՆՆԵՐՈՒՆ ՍԷՋ**

1. CORAL JAL EL DIB, Ժէլ Էլ Տիպ
2. HYPCO ANTELIA, Կարաթ Ալ Դաւարս
3. SPEED ANTELIA, Կարողիկոսարանի դիմաց
4. CORAL BAABDAT, Պապատէ մայրուղի
5. SPEED ACHRAFIEH, Էլ Նահր PEUGEOT ընկ. առաջ
6. HYPCO HAMRA, Պանք Տի Լիպանցեւ առաջ
7. MEDCO KARANTINA, Զարաթիկայի մայրուղի
8. CORAL BHAMDOUN, Դամասկոսի մայրուղի
9. CORAL MAR MIKHAEL, Սար Միխայէլ, Սաատ պողոտայ
10. SPEED ALITTIH, Կալեթի Իթթիհատ
11. MANAR FANAR, Ֆանար, Նաւոր պանդոկին կից
12. CALTEX ANJAR, Այնճար
13. BASSIL DORA, Տորայի կամուրջ
14. ԱՍԺԱԿԱՆ ԿԱՅԱՐԱՆ, Տորա, «Ալմագա»ի կից

ԱԺՄ 2ՈՐՐՈՐԴ ԹԵԻՒ ՆԱԽԱԳԱՀ Կ'ԸՆՏՐՈՒՒ ՍԷՅՐԱՆ ԱՒԱԳԵԱՆ

Ազգային ժողովրդավարական Միություն (ԱԺՄ) վարչությունն անդամներուն կողմէ վերջերս ստեղծուած կուսակցութեան նախագահ ընտրուեցաւ Սէյրան Աւագեան՝ Ազգային ժողովի ԱԺՄ խորհրդարանական խմբակցութեան նախագահի պաշտօնակատարը:

Թեւ ընտրութեան, Սէյրան Աւագեան նշեց, որ կանոնադրութեան համաձայն, խմբակցութեան նախագահը չի կրնար միաժամանակ վարել վարչութեան նախագահի պաշտօնը, եւ այս իմաստով ինք յաւակնութիւնը չունի ղեկավարելու խմբակցութիւնը, բայց պարզապէս ըլլալով խմբակցութեան քարտուղարը պարտականութիւնները դրուած էին իր վրայ:

Ս. Աւագեան նաեւ յայտնեց, որ թէեւ որոշուած է նոր կուսակցութեան անունը, սակայն անկա պիտի հրապարակուի արդարադատութեան նախարարութեան մօտ պաշտօնապէս արձանագրուելէն ետք:

ԸԱՅԱՍՏԱՆ - ՎՐԱՍՏԱՆ ՍԱՐՄԱՆ

ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ ՍՆՆԴԵՂԵՆԻ ԵՒ ԾԽԱԽՈՏԻ ՄԱՔՍԱՆԵՆ ԳՈՒԹԻՒՒՆ

Հայաստանի մաքսային պետական կոմիտէն տեղեկացուցած է, որ Թիֆլիս - Երեւան երկաթուղիի ճամբորդներուն մօտ յայտնաբերուած է մեծ քանակութեամբ սննդեղէն եւ ծխախոտ, առանց մաքսային տուրքի:

Հայաստանի չորս քաղաքացիներ վրաստանէն ապահոված են սննդեղէն եւ զայն փոքրիկ ծրարներու վերածելով՝ միւս ճամբորդներէն խնդրած են իրենց հետ մինչեւ Երեւան հասցնել զանոնք: Մաքսանենգուած սննդեղէնը կը հաշուէ աւելի քան 5 թոն, 8 միլիոն 246 հազար դրամ ընդհանուր արժողութեամբ:

Նոյն աղբիւրին համաձայն, յայտնաբերուած է նաեւ չկնքուած, մաքսանենգուած ծխախոտ, որ կը հաշուէ 2200 տուփ եւ շուկայական գիներով կ'արժէ 250 հազար դրամ: Երկու մաքսանենգութիւններուն հեղինակները մեծամասնութեամբ կիներ են:

«ՅՈՎՆԱՆԵԱՆՆԵՐ» ՀԻՄՆԱԴՐԱՄԸ ԿԸ ՅԱՅՏԱՐԱՐԷ ՆՈՐ ՄՐՑՈՒՄ

«Վահագն եւ Յասմիկ Յովնանեաններ» հիմնադրամը, նկատի ունենալով լաւագոյն երգի «Սայաթ Նովա» համահայկական մրցանակաբախտութեան լայն արձագանգը, այս մրցումին զուգահեռ պիտի կայացնէ նոր՝ «Վահագն» խորագրով համահայկական տարեկան մրցում արուեստի միւս բնագաւառներուն՝ շարժապատկերի, թատրոնի, կերպարուեստի, լրագրութեան եւ այլ մարզերու համար:

Հայաստանի մշակույթի, երիտասարդութեան հարցերու եւ մարմնակրթութեան նախարարութեան աշխատակազմի ղեկավար Ստեփան Դաւիթեան 22 Հոկտեմբերին լրագրողներուն յայտնած է, թէ «Վահագն» մրցանակաբախտութիւնը պիտի ներառէ վերջին տասնամեակի լաւագոյն ստեղծագործութիւնները՝ եօթը անուանացանկով. լաւագոյն տեսաերկի, թատերական ներկայացման, կինոնոսքի եւ տղամարդոց դերերու, կերպարուեստի, գրական լաւագոյն ստեղծագործութեան եւ լրագրական լաւագոյն հետաքննութեան համար: Վերջին անուանացանկին համար սահմանուած է մէկ տարուած ժամանակ:

Մրցումին համապատասխան յանձնախումբերը ներկայացուած աշխատանքներէն պիտի ընտրեն 3 լաւագոյնները եւ մինչեւ 31 Մարտ 2002 պիտի ներկայացնեն Հայաստանի մշակույթի նախարարութեան: Մրցումին յաղթողները պիտի ստանան հիմնադրամին սահմանած «Վահագն» մրցանակ (արժանիկ) եւ 5000ական տոլար:

Մրցումին կրնան մասնակցել թէ՛ անհատներ եւ թէ՛ ստեղծագործական միութիւններ: Սփիւռքէն եւ Հայաստանէն: Համապատասխան յանձնախումբերը տակաւին չեն կազմուած, սակայն, ըստ Ս. Դաւիթեանի, անոնց մէջ պիտի ըլլան արուեստի աշխարհի ճանչցուած դէմքերը:



THE CULTURAL HOUR
@
HAIGAZIAN UNIVERSITY
invites you to a lecture
on
Remembrance of Things Past:
The Lebanese Railway (DHP)
by
DR. SHEREEN KHAIRALLAH
at
HAIGAZIAN UNIVERSITY
AUDITORIUM-KANTARI
Thursday, October 25, 2001 - 7:00 P. M.

www.lemagan.com

«ՀԱՅ - ՉԻՆԱԿԱՆ ՄԻԱՑԵԱԼ ԶԵՌՆԱՐԿՈՒԹԻՒՆՆԵՐ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԵԾ ԿԱՐԵԼԻՈՒԹԻՒՆՆԵՐ ԿԱՆ»

Կ'ԸՍԵ ՍԵՐԺ ՍԱՐԳՍԵԱՆ

15էն 21 Հոկտեմբեր Չինաստան կատարած աշխատանքային այցելութենէն վերադարձին Հայաստանի պաշտպանութեան նախարար Սերժ Սարգսեան «Ջուարթնոց» օդակայանին մէջ տուած մամլոյ ասուլիս մը, որուն ընթացքին ան դրականօրէն արտայայտուեցաւ հայ - չինական յարաբերութիւններուն մասին:

Ս. Սարգսեան նշեց, որ ոչ միայն զինուորական - արհեստագիտական մարզի պարագային, այլեւ, տնտեսական եւ այլ մարզերու մէջ հայ - չինական գործակցութեան լայն կարելիութիւններ գոյութիւն ունին, եւ այդ կարելիութիւնները լաւապէս ուսումնասիրելու նպատակով պիտի յառաջացուի հայ - չինական տնտեսական յանձնախումբ մը:

Ս. Սարգսեան ըսաւ, որ զինուորական - արհեստագիտական մարզին մէջ Հայաստան սերտօրէն կը գործակցի Չինաստանի հետ եւ, ըստ քանի մը ամիս առաջ ստորագրուած համաձայնագիրին, հայկական ընկերութիւններ ներկայիս մղուած են Չինաստանի համար ամբողջացնելու արհեստագիտական եւ զինուորական սարքերու, քանի մը միլիոն տոլար արժող ապարանքներ: Այս գծով ան համոզում յայտնեց, որ յառաջիկային աւելի կ'ընդլայնի Չինաստանի հետ գործակցութեան դաշտը, յատկապէս՝ զինուորական ճարտարարուեստի մարզին մէջ:

Նախարար նաեւ նշեց, որ երկու երկիրներու գործակցութիւնը ընդգրկած է նաեւ մարդու զարգացումը, եւ այս տարեշրջանին Չինաստանի զինուորական գլխաւոր ակադեմիային մէջ իրենց ուսուցումը աւարտած են հայկական բանակի երկու աւագ սպաներ, իսկ երկու ուսանողներ արդէն գործուղուած են Չինաստանի ռազմական համալսարան՝ չինարէն սորվելու նպատակով: Միւս կողմէ, հայկական կողմը պատրաստակամութիւն յայտնած է Երեւանի պետական բժշկական համալսարանին մէջ հիւրընկալելու 2 չինացի ուսանող - սպաներ:

Մամլոյ ասուլիսի ընթացքին Ս. Սարգսեան նշեց, որ Չինաստան Հայաստանը կը նկատէ բարեկամ երկիր եւ շարաքղի հարցի լուծման մէջ Չինաստան կողմնակից է խաղաղ միջոցներու օգտագործման:

ՆՈՐ ՏԵՍԱԿԻ ԶԿՆԿԻԹ՝ ՍՈՅԱՅԵՆ

Վերջերս Գերմանիոյ Քէօն քաղաքին մէջ տեղի ունեցաւ համաշխարհային ճանաչում ունեցող լաւագոյն սննդամթերքներու «Անուկա» ցուցահանդէսը, որուն կը մասնակցէին նաեւ Միացեալ Նահանգներու բազմաթիւ շրջաններու պատուիրակութիւններ:

Միացեալ Նահանգներու տաղաւարին մէջ իր ստեղծած նոր ձկնկիթով ներկայացուած էր Քալիֆորնիոյ Կլինտէյլ քաղաքի «Ռոյալ Քալիֆոր» արտադրական կազմակերպութիւնը, որուն տնօրէնն է Նախկին երեւանցի արտաբան Ռոպէրթ Նաչատրեան:

Տարիներու յամառ փնտռութիւնէրէ ետք Ռոպէրթ Նաչատրեան յաջողած է սովորական սոյայի ստանալ ձկնկիթ, որ ոչ միայն տեսքով եւ համով չի տարբերի իսկական ձկնկիթէն, այլեւ քոլեսթերոլ ալ չի պարունակեր: Նոր տեսակի ձկնկիթը իր արժէքով 30-40 անգամ աժան է իսկականէն:

Քէօն քաղաքի մամուլը լայնօրէն արձագանգած է հայ գործարարի գիտելին:

ԱՋՐՊԵՅՃԱՆՑԻ ԳՈՐԾԱԿԱԼ՝ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՈՎ

Հայաստանի սահմանային շրջանին մէջ վերջերս ձեռնարկուած է Նախիջևանէն Հայաստան թափանցած ազդպէյճանցի գործակալ Մուհամմատ Օճալեր-տիւն, որ Պաքուի մէջ զինուորական ծառայութենէ խուսափելէ ետք բանտարկուած, ապա յատուկ յանձնարարութեամբ ռուսերուցուած էր Հայաստան:

Հայաստանի ապահովութեան մարմինները բացայայտած են, որ ազդպէյճանցի գործակալին յանձնարարուած է՝ ձեռքարկուելու պարագային հայկական կողմը համոզել, թէ Ազդպէյճանի մէջ իր դէմ ի գործ դրուած ռուսարարներուն պատճառով, ինք պատրաստ է Հայաստանի առաջադրանքով ահաբեկչական եւ զինուորական գործողութիւններ կատարել Նախիջևանի մէջ՝ Ազդպէյճանէն վրէժ լուծելու նպատակով:

Հայաստանի ազգային անվտանգութեան նախարարութեան հաստատումով, այս դէպքը առաջինը չէ, որով Ազդպէյճան կը փորձէ խռովութիւն յառաջացնել Հայաստանի մէջ: Գործակալներ կ'ուղարկուին այն յոյսով, որ կը յաջողին հայկական յատուկ ծառայութիւններու միջոցով կազմակերպել ահաբեկչական գործողութիւններ եւ գործուղուել Նախիջևան, ուր բացայայտելով իրենց ինքնութիւնը՝ Հայաստանը կ'ամրաստանեն ահաբեկչական գործողութիւններ կազմակերպելու յանցանքով, դիտել տուած նախարարութեան բաները:



Հ.Մ.Ը.Մ.
ԱՆԹԻԼԻԱՍԻ
ՄԱՍՆԱԾԻՂ
ԶԱՏՐԱԿ
Ծառակի դասընթացները կը սկսին Ուրբաթ, 26 Նոյեմբեր 2001, երեկոյեան ժամը 6:00ին, Աղբալեան ակումբի «Սերժ Թովմասեան» սրահին մէջ:
ԿԱՐՉՈՒԹԻՒՆ

ԼԻԲԱՆԱՆԻ ՄԵԶ

ՀԱՅՐԵՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՆԵԿԱՅԻՆ ՆՈՒԱԳԱԽՈՒՄԲԻՆ ՆՈՐ ՅԱԶՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Լիբանանի երաժշտական կեանքին մէջ նշանակալից իրադարձութիւն եղան Հայաստանի Ազգային սենեկային նուագախումբին փայլուն ելոյթները, որոնք ոչ միայն գեղարուեստական անմոռանալի պահերու ծնունդ տուին ունկնդիրներուն, այլեւ նուագախումբին ամերիկեան թէ՛ եւրոպական բազմածիր համերգարշաւի իրականութեամբ ապացուցեցին եւ ընդգրծուն դարձուցին աշխարհին բարձրարուեստ երեւոյթով ներկայանալու կարելիութիւնն ու կարողութիւնը:

Համերգները տեղի ունեցան Ուրբաթ 12 եւ Շաբաթ 13 Հոկտեմբերին, Ամերիկեան համալսարանի «Էսէմպլի Հոլ»-ին մէջ: Անոնք կազմակերպուած էին Հ.Բ.Լ.Մ. - Հ.Բ.Լ. «Անդրանիկ» մշակութային միութեան կողմէ եւ նուազապէս 70ամեակներուն: Ներկայ եղան Հայաստանի դեսպան Արման Նաւասարդեան, պաշտօնական հիւրեր եւ երաժշտասէրներ: Ներկայ գրութիւնը կը վերաբերի Ուրբաթ օրուան համերգին:

Դասական ոլորտներէ դէպի ժամանակակից ու նորագոյնը սլացող բարձր ճաշակով ու խնամքով ընտրուած յայտագիրը կ'ընդգրկէր հայ թէ՛ օտար մեծարժէք երկրու շարք մը: Համերգը



Հայաստանի Ազգային սենեկային նուագախումբը:

սկսաւ Մոցարթի եռամաս «Divertimento in D Major»-ի մատուցմամբ, որ իր անթիլի արտայայտութիւնը դաւա Արամ Ղարաբէկեանի զուսպ ու ազնուական ճիւղտին տակ: Ցաւոքեց հայրենի երաժշտական խտուարտ Հայրապետեանի նորագոյն ստեղծագործութիւններէն Միսաք Մեծարեանի «Անտուն» բանաստեղծութեան հիման վրայ երկնուած սովորաւոր, դաշնակի եւ նուագախումբի համար յօրինուած, որուն մեղեդայնութեան հիւսիսները բանը եղաւ Նուսէր Պատալեան: Նուսէր Պատալեան (ղուստըր մեծանուն երգիչ Յովհաննէս Պատալեանի դաշնակի) Էլլա Մեիք Հիւսիսեան եւ նուագախումբի հետ կատարեց նաեւ երգաշար մը՝ Խաւիշ Մոնսալվաժի «Cinco Canciones Negras»-ը, որ նոյնպէս հետաքրքրական նորութիւն էր Լիբանանի երաժշտասէրին համար: Եւ յիշեալ գոյգ ստեղծագործութիւնները, եւ անոնց մեկնաբանութիւնը ունկնդիրները ընդունեցին մեծ սիրով ու ցնծութեամբ: Նուսէր Պատալեան շրջանաւարտ է



Նուագախումբ Արամ Ղարաբէկեան եւ երգիչ Նուսէր Պատալեան

Երեւանի Կոմիտասի անուան պետական երաժշտանոցէն՝ դասատու ու նենալով երգչուհի եւ մանկավարժ Տաթևիկ Սաքանդարեանը: Ուսանողական տարիներէն իսկ ծաւալած է համերգային եւ կատարողական գործունէութիւն եւ նուազապէս յաջողութիւններ: Լիբանանահայ ունկնդիրները վստահաբար գինք կը յիշեն հայրենի օփերային թատրոնի այս տարուան լիբանանեան հիւրահամերգներէն, ուր ան մաս կազմեց «Լա Թրաւիաթա»-ի ներկայացման: Գեղեցիկ ձայներով, արհեստավարժ տիրապետմամբ ու ջերմ հաղորդականութեամբ Նուսէր Պատալեան հարազատ մեկնաբանը եղաւ գոյգ ստեղծագործութեանց ալ պարագային:

Յայտագիրին երկրորդ բաժինով նախ կատարուեցաւ հայրենի ժամանակակից երէց սեռերու հիւսիսներէն Վարդգէսի «Variations for string orchestra» լայնաշունչ ստեղծագործութիւնը, որ ինքնին նուագախումբային վերադարձութիւն, որ ինքնին նուագախումբը կը նշանաւոր քառեակին: Նուագախումբը խորաթափանց ընկալումով արտայայտեց հոն պարփակուած ազգային երաժշտութեան համադրութիւնը ընդհանրական-համաշխարհայինի հետ, ինչպէս նաեւ՝ յուսկանական ներաշխարհի երեւելիները: Ապա նուագախումբային համաշխարհային էջերէն հնչեց Շիթաուս-Շո-էնպէրկի «Roses from the South» վալսը՝ գուարթալաւարտի հասցնելով յայտագիրին յայտարարութեամբ բաժինը, որ ներկայաներուն անընդհատ

«ԱՉԳԱԿ»Ի ՄԵԶ ԾԱՆՈՒՅՈՒՄԻ ՀԱՄԱՐ

Բոլոր անոնք, որոնք կը փափաքին «Ազգային» մէջ որեւէ ծանուցում հրատարակել, պէտք է բնագիրը խմբագրատուն՝ Ծանուցումներու բաժնում ուղարկեն հաւստանալիս թուականը՝ անուանագ օր առաջ, Միշտեի երեկոյեան ժամը 5:00:

ՄԱՀԱԶԳՆԵՐԸ բացառութիւն է: Մահագր կ'ընդունուի մինչեւ ուշ գիշեր, այնքան ատեն որ զայն հրատարակելու հնարաւորութիւն կայ:

Զ. ՔԵՇԻՇԵԱՆ

ԱԶՐՊԻՅՃԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾԱԿԱՏԱԳՐԻ ՇՈՒՐՁ

Արեւելեան Անդրկովկասի տարածքը եղել եւ շարունակում է մնալ ազգային փոքրամասնութիւնների համար խնդրալարոյց չըջան։ Այդ խնդիրները տարբեր ձեւերով եւ սրութեամբ դրսեւորուել են շրջանում տեղի ունեցած զանազան քաղաքական, ազգային, դաւանական գործընթացների ժամանակ։ Դարասկզբին (1918 թուականին) այդ շրջանում ձեւաւորուեց Ազըրպէյճանի հանրապետութիւնը, եւ ինչպէս ցոյց տուեց պատմութիւնը, այդ տարածքի ազգային փոքրամասնութիւնները յայտնուեցին նոր խնդիրների առջեւ։

1918ին, թրքական ներխուժման հետեւանքով Ազըրպէյճան անուանումը կրող պետական կազմաւորման ստեղծումը սկզբից կոչուած էր ծառայելու փանթրքական ծրագրերի իրագործմանը։ Նշենք, որ Ազրպէյճան անուանումը իրանական Ատրպատական երկրամասի անուանումն էր՝ արաբերէն՝ Ազարպայճան, թրքերէն՝ Ազերպայճան։ Ենթադրուում էր, որ այդ անուանմամբ պետական կազմաւորման ստեղծումը հիմք կը տայ հետագայում այդ հանրապետութեանը կցել նաեւ իրանական Ատըրպատականը, որը բնակեցուած էր թրքախօս զանգուածով։

1924ին, Պաքուի համալսարանում պատասխանելով ուսանողների հարցերին, անուանի արեւելագէտ Վ. Պարդոյտը նշում է, որ երբ հնագոյն Առանի եւ Շիրվանի տարածքում կազմաւորուեց Ազըրպէյճանի հանրապետութիւնը, ենթադրուում էր, որ հետագայում դրան կը կցուի նաեւ իրանական Ատըրպատականը։ Ահա՛ թէ ինչո՞ւ ընտրուեց Ազերպայճան անուանումը։

Իր գոյութեան ընթացքում այս հանրապետութիւնը վարել է այդ տարածքում բնակուող ազգային փոքրամասնութիւնների դուրս մղման, ձուլման, նրանց մշակոյթի իւրացման, թրքական տարրի գերիշխանութեանն ուղղուած քաղաքականութիւն։ 20րդ դարու սկզբին Արեւելեան Այսրկովկասը բազմազգ եւ բազմակրօն միջավայր էր, ուր ապրում էին հիմնականում իրանական, թրքական, կովկասեան, հայկական տարրեր։ Հայ հասարակութեանը յայտնի է Ազըրպէյճանում հայկական տարրի դուրս մղման քաղաքականութիւնը, որը դրսեւորուել է թէ՛ «սպիտակ եղեռնի» տեսքով, թէ՛ Զարդերով, Նիկիզումներով։ Հայ բնակչութիւնը զանգուածաբար բռնազաղթի ենթարկուեց 1988-1991 թուականներին։ Արդիւնքում՝ հայերը դուրս մղուեցին պատմականօրէն ձեւաւորուած իրենց բնակավայրերից, որոնց մի մասը գտնուում էր հայոց հայրենիքի տարածքում (Շահումեանի ենթաշրջան, Գարդաբի, Դաշտային Զարաբաղ, Արծուաշէն, Եւն.)։

Մեր հասարակութեանը քիչ է յայտնի, թէ ի՞նչ քաղաքականութիւն է վարուել այդ հանրապե-

տութիւնում բնակուող ազգային այլ փոքրամասնութիւնների նկատմամբ, եւ, առհասարակ, ի՞նչ այլ ազգեր ու ազգութիւններ, ցեղային խմբեր են բնակուում այդ հանրապետութիւնում, որը յաճախ զանգուածաբուժ ներկայացուում էր որպէս զուտ թրքական տարրով բնակեցուած տարածք, այնինչ այդ տարածքում դարեր շարունակ բնակուել եւ բնակուում են նաեւ այլ ժողովուրդներ։

Փորձ ենք անում ներկայացնել Ազըրպէյճանի Հանրապետութիւնում գտնուող ազգային փոքրամասնութիւնները։

- Թաթեր.- Արեւելեան Անդրկովկասի իրանական ժողովուրդներից են, հիմնականում՝ մահաբետականութեան հետեւորդ, խօսում են «թաթ» կոչուող իրանական լեզուով, որը մօտ է պարսկերէնին։ Բնակուում են Դերբենտից Ապշերոնեան թերակղզի ընկած տարածքում, նաեւ՝ Շամախու յարակից շրջաններում։ Համարում են դեռեւս Սասանեանների օրով՝ 5-6րդ դարերում այդ վայրեր տեղափոխուած իրանական վերաբրեւակիչների յետնորդները։

Համարում է, որ «թաթ» անուանումը սկզբնապէս չի ունեցել ազգային իմաստ, այլ՝ ցոյց է տուել ընկերային կացութիւն եւ թրքական քոչուոր ցեղերի կողմից տրուել է Արեւելեան Անդրկովկասի նստակեաց իրանական բնակչութեանը։

Թաթերը, որպէս մահաբետական փոքրամասնութիւն, 20րդ դարում ինչպէս յայտնուեցին իրենց ազգային դիմագիծը կորցնելու վտանգի առջեւ։ Ըստ 1897ի մարդահամարի՝ Պաքուի նահանգում կար 89,511 թաթախօս բնակիչ։ Ըստ Խորհրդային Ազըրպէյճանում անցկացուած 1979ի մարդահամարների՝ 8800։

Ծարիներ շարունակ նշուել է թաթերի եւ ազերիների կենցաղամշակութիւնը, ընդհանրութիւններ մասին, եւ բնական է համարել թաթերի ձուլումը ազերիների կազմում։ Չժխտելով հանդերձ առարկայական գործօնների ազդեցութիւնը այդ գործընթացների վրայ, այնուհանդերձ, բերուած տուեալները ինքնին խօսում են որոշակի նպատակաւորութեան թաղաքականութեան մասին։ Արեւելագէտ Պ. Միլէրը, նշում է փաստեր (Ապշերոնում) թաթերի բռնի թրքացման մասին։ Դարասկզբին թաթերի մի քանի գիւղեր թրքացուեցին փանթրքիստների գործունէութեան արդիւնքում։

Թաթերէն խօսող ժողովուրդները, ըստ զաւաններ, բաժանուել են 3 խմբի՝ թաթ-մահաբետական, հայ-թաթեր կամ թաթ-քրիստոնեաներ, եւ թաթ-յուդայականներ կամ լեռնային հրեաներ։ Թաթերէն խօսող խմբերի խնդրը պատմական, ազգաբանական առումով պարզաբանուած չէ։ Արդեօք

իրանական ծագմամբ, սակայն տարբեր դաւանաքներ ունեցող, թէ՞, լեզուական ընդհանրութիւն ունենալով հանդերձ, դրանք տարբեր ցեղային խմբեր են։

Հետաքրքրական կը լինի տեղեկութիւններ հաղորդել «հայ-թաթեր» կամ «թաթախօս հայեր» կոչուող խմբի մասին, որը դարեր շարունակ բնակուել է արեւելեան հիւսիս-արեւելեան Այսրկովկասում։

Հայադաւան այս խումբը ունի ուրոյն մշակութային դիմագիծ եւ ներկայացնում է հայկական, իրանական, թրքական ազգամշակութաւանական ազդեցութիւնների հետաքրքրական խառնուրդի օրինակ։

Հայ-թաթերի ծագումնաբանութիւնը պարզաբանուած չէ։ Արդեօք իրանական ծագմամբ, սակայն հայադաւան քրիստոնեայ խումբ է, թէ՛ հայկական ծագմամբ, պատմական հանգամանքների բերումով թաթախօս դարձածներ են նրանք։ 1796ին ռուսական զօրքերի Անդրկովկաս կատարած արշաւանքի պատճառով ստեղծուած աննպաստ քաղաքական պայմաններ հետեւանքով, հիւսիսարեւելեան Այսրկովկասում (Ղուպա, Մուշուր) բնակուող հայ-թաթերի զգալի մասը նահանջող ռուսական զօրքերի հետ հեռացաւ հիւսիսային կովկաս՝ հաստատուելով՝ Ղըլարում եւ շրջակայքում, Մոզտոկում, Մուրը Խաչում (այժմ՝ Պոտոմոնովսկ) եւ այլն։ Մինչեւ այժմ էլ նրանց յետնորդները բնակուում են այդ վայրերում։

1988-1991, հայ-թաթերի վերջին բեկորները բռնազաղթի ենթարկուեցին իրենց գիւղերից (Մատրասա, Քիւլար)։

- Թալիշներ (ինքնանուանումը՝ թոլիշ).- Մեծապատկան իրանական այս ժողովուրդը բնակուում է Ազըրպէյճանի հարաւարեւելեան շրջաններում (Լենքորան, Ասթարա եւայլն) ու սահմանակից Իրանի հիւսիս-արեւմուտքում (Թալիշ շրջան)։ Եղել են Մարաստանի, Պարսկաստանի իշխանութեան ներքեւ։ 18րդ դարու կէսերին կազմաւորուեց Թալիշի անկախ խանութիւնը՝ Լենքորան կեդրոնով։ Հետագայում, Ռուսաստանի եւ Պարսկաստանի միջեւ կնքուած Գիւլիստանի եւ Թուրք-մենչալի պայմանագրերով՝ թալիշները յայտնուեցին պետական տարբեր կազմաւորումների կազմում։ Այժմ էլ գտնուում են Ազըրպէյճանի ու Իրանի կազմում։

Թալիշները նոյնպէս ենթարկուել են Ազըրպէյճանում վարուող թրքացման քաղաքականութեանը՝ սկսած դեռեւս 1920ական թուականներից։ օրինակ, 1970ի մարդահամարում ընդհանրապէս չի նշուում ազգային այս փոքրամասնութեան մասին։ Մօտաւոր հաշուարկով նրանց թուաքանակը Ազըրպէյճանում 120 հազար է։

ԱՐՄԵՆ ՅԱՊԱՔԵԱՆ
Շար.ը՝ էջ 10

«ԹՈՒՐԲ-ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՇՏԵՏՄԱՆ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎ»Ը ՊԱՌԱԿՏԵԼ Է ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԸ

«Մենք իրականում դեռեւս չգիտենք «Թուրք-Հայկական Հաշտեցման Յանձնաժողով»ի ձեւաւորման հանգամանքները, քանզի նրանք, ովքեր ներգրաւուած են յանձնաժողովում, իրենց մեկնաբանութիւնները մէջ շատ աղօտ են ու երկիմաստ։ Մենք այժմ դիտենք, որ Միացեալ Նահանգների արտաքին գործոց նախարարութիւնը՝ հակառակ բազում պնդումների, թէ ուղղակիօրէն ներգրաւուած չէ, Ֆինանսական օժանդակութիւն է տրամադրել «Թուրք-Հայկական Հաշտեցման Յանձնաժողով»ին։ Ես կարծում եմ՝ մենք դեռեւս իմանալու շատ բան ունենք «Թուրք-Հայկական Հաշտեցման Յանձնաժողով»ին ձեւաւորման Միացեալ Նահանգների կառավարութեան ներգրաւածութեան մասին։ Ամերիկայի Հայ Դատի Յանձնախումբին ուղղակիօրէն պատասխանեցին, որ իրենք աջակցել են «Թուրք-Հայկական Հաշտեցման Յանձնաժողով»ին, քանի որ Հայոց Ցեղասպանութեան բանաձեւի հարցում Միացեալ Նահանգների Քոնկրէսի համար այլընտրանք էր», «Ազգ»ին տուած հարցազրոյցում ասաց Ամերիկայի Հայ Դատի Յանձնախումբի նախագահ Քենէթ Ջաչիկեանը։

«Թուրք-Հայկական Հաշտեցման Յանձնաժողով»ին գոյութիւնն առաջինը բացայայտեց «Նիւ Եորք Թայմզ»ը, որն իր յօդիսեան համարներից մէկում գրել էր, թէ յանձնաժողովականները գաղտնի հանդիպումներ են ունենում Միացեալ Նահանգների Քոնկրէսում Հայոց Ցեղասպանութեան բանաձեւի քննարկումների ժամանակներից։ Մինչեւ Հոկտեմբերի 2ը, երբ պարզուեց, որ «Թուրք-Հայկական Հաշտեցման Յանձնաժողով»ին Ֆինանսական օժանդակութիւն է տրամադրում Միացեալ Նահանգների արտաքին գործոց նախարարութիւնը՝ Ուաշինկթոնի ամերիկեան համալսարանի խոզովակներով, արտաքին գործոց նախարարութիւնից պաշտօնեաները կտրականապէս բացառում էին Միացեալ Նահանգների կառավարութեան մասնակցութիւնը «Թուրք-Հայկական Հաշտեցման Յանձնաժողով»ին ստեղծմանը։

«Թուրք-Հայկական Հաշտեցման Յանձնաժողով»ը ակնյայտօրէն պառակտել է Ամերիկայի հայկական համայնքը, ինչը, հաւանաբար, Միացեալ Նահանգների արտաքին գործոց նախարարութեան եւ Թուրքիայի ուղած է։ Ամերիկահայերի մեծ մասը չի աջակցում, հաւանութիւն չի տալիս յանձնաժողովին, սակայն, այնուամենայնիւ, «Թուրք-Հայկական Հաշտեցման Յանձնաժողով»ի գոյութիւնն իսկ տարածաշրջաններ է առաջացրել համայնքում, ինչը մեր քաղաքական իշխանիներ ջանկութիւնն է», մեզ հետ զրոյցում ասաց Քենէթ Ջաչիկեանը։ «Զեր գործիքով, պաշտօնական Անգարայի՝ «Թուրք-Հայկական Հաշտեցման Յանձնաժողով»ի գործունէութեանը հաւանութիւն տալը միտումն է յանձնաժողովը որպէս գործիք օգտագործելու ընդդէմ Հայոց Ցեղասպանութեան միջազգայնօրէն ճանաչմանը։ Եթէ այդ, ապա կարո՞ղ էք դա փաստարկել», «Ազգ»ի այս հարցին Ամերիկայի Հայ Դատի Յանձնախումբին նախագահը տուեց հետեւեալ մեկնաբանութիւնը. «Ակնյայտօրէն, Միացեալ Նահանգների արտաքին գործոց նախարարութիւնն այդպէս է կարծում։ Ես ենթադրում եմ, որ արտաքին գործոց նախարարութեան այդ կարծիքը ձեւաւորուել է Թուրքիայի իրենց գործընկերների հետ աշխատանքի արդիւնքում։ Արդէն նախորդ շաբթ Եւրոմիութեան ենթալիանաժողովի փոխընթացակցութեան կշռոյթը՝ Նախկինում Եւրոմիութիւնը Թուրքիայի մուտքն այդ կազմակերպութիւն պայմանաւորում էր Ցեղասպանութեան նախապէս ճանաչումով։ Եւրոմիութեան ենթալիանաժողովի նախագահը, Թուրքիայի նկատմամբ չեղտադրումների փոփոխութիւնն ակնաբերելով, յղում արեց «Թուրք-Հայկական Հաշտեցման Յանձնաժողով»ի գոյութեանը։ Հայաստանում Միացեալ Նահանգների արդէն նախկին դեսպան Մալքը Լեմընն ասում էր, որ «այս տարի Հայոց Ցեղասպանութեան բանաձեւ չի լինի»։ Ես ինքս ինձ հարցնում էի՝ ինչո՞ւ է նա այդպէս կարծում»։

Ամերիկայի Հայ Դատի Յանձնախումբը Միացեալ Նահանգների հայկական երկու խոչորագոյն կազմակերպութիւններից մէկն է, մասնաճիւղեր ունի Միացեալ Նահանգների հայաշատ մի քանի տասնեակ քաղաքներում։ Երկրորդ հայկական խոչոր կազմակերպութիւնը, որը, քաղաքագէտ Անդրանիկ Միհրանեանի պնդմամբ, «լուրջ կապեր ունի Միացեալ Նահանգների արտաքին գործոց նախարարութեան հետ», Ամերիկայի Հայկական Համագումարն է։ Նախնական պայմանաւորութեան համաձայն, մօտակայ օրերին «Ազգ»ին հարցազրոյց կը տայ Ամերիկայի Հայկական Համագումարի տնօրէնների խորհրդի նախագահ, հայկական կողմից «Թուրք-Հայկական Հաշտեցման Յանձնաժողով»ի անդամ Վան Գրիգորեանը։

Ի դէպ, Միացեալ Նահանգների հայկական ազդեցիկ շրջանակներին մօտ կանգնած աղբիւրները յամառօրէն պնդում են, որ Ամերիկայի Հայկական Համագումարն Հայոց Ցեղասպանութեան ճանաչման հարցում ընդունելի է համարում «պատմական դէպքերը պատմաբանների դատին թողնելու» մօտեցումը՝ հակառակ Ամերիկայի Հայ Դատի Յանձնախումբի, որը հայ-թրքական երկխօսութեան ընդունելի է համարում այն դէպքում, եթէ Թուրքիան կանխաւ ճանաչի Հայոց Ցեղասպանութիւնը, վերջ տայ Հայաստանի տնտեսական շրջափակմանը, Լեռնային Ղարաբաղի հարցում փոխ իր ազըրպէյճանամէտ կեցութեւրը։ Ամերիկայի Հայ Դատի Յանձնախումբին մօտ կանգնած աղբիւրները յիշում են, որ դեռեւս 1992 թուականին Սպիտակ Տանը կազմակերպուած հան-

ԹԱԹՈՒԼ ՅԱՊԱՔԵԱՆ
Շար.ը՝ էջ 10

ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԻ ՀԱՅԱՄԷՏՈՒԹԻՒՆԸ ԽՈՐՀՐԴԱՆՇՈՒԿԱՆ Է

«Ազգ»ը նախորդ համարում, անդադառնալով «հայերկիւնութեան հետ Հայաստանի առնչութիւններին» մասին Թուրք-ազրպէյճանական մեղադրանքներին, դրանք յերկրանք էր որակել եւ կարծիք էր յայտնել, որ յերկրանքները քաղաքական միջոց չեն, բայց կարող են սպառել ինչպէս Թուրքիայի, այնպէս էլ Ազըրպէյճանի որդեգրած հայկական քաղաքականութեան դիրքերը։ Այդ կարծիքը հիմնաւորուել է Պաքուում ամերիկեան դեսպան Ռոս Ուիլսոնի յայտարարութեամբ. «Միացեալ Նահանգները չի պաշտպանի «հակահայերկիւն» գործողութիւնն ընդդէմ հայերին»։

Հայաստանի դէմ այսպէս կոչուած հակահայերկիւնական գործողութիւններ ծաւալելու Միացեալ Նահանգներին հասցէագրուած Թուրք-ազրպէյճանական պահանջներն ակնյայտ են։ Դեսպան Ուիլսոնի յայտարարութիւնն ակնյայտօրէն ընդգծում է, որ դրանք անընդունելի են Միացեալ Նահանգների համար։ Այլ կերպ՝ Միացեալ Նահանգներն իրենց դեսպանի միջոցով մերժում են Թուրքերի եւ ազրպէյճանցիների համատեղ պահանջները։ Թրեւս նա դրանով Հայաստանի դէմ հակահայերկիւնական գործողութիւնների հարցում «հակաթրքական» եւ «հակաազրպէյճանական» մօտեցում է դրսեւորում, ինչը համագոր է «հայամէտ» մօտեցման։

Սակայն աֆղանական պատերազմի ներկայ փուլում, երբ իսլամական աշխարհն Միացեալ Նահանգներին է հակադրում, ամերիկեան շահերը պահանջում են, որ նա ապաւինի յատկապէս մահմետական երկրների անվերապահ աջակցութեանը։ Այս հանգամանքը պահանջում է «հակաթրքական» եւ «հակահայերկիւնական» վերոյիշեալ մօտեցումների «հակահայկականով» հաւասարակշռում։ Ահա այս պայմաններում շրջանառութեան մէջ է դրւում չարամաստիկ 907 յօդուածի վերանայումը, եւ դա պատճառաբանում է Ուսամա Պըն Լատէնի հետ հետաւոր կապ ունեցողների յայտնաբերման հարցում Ազըրպէյճանի յատուկ ծառայութիւնների հետ Միացեալ Նահանգների Հետաքննութիւնների Դաշնակցային զբաւեւեակի համագործակցութեան անհրաժեշտութեամբ։

907 յօդուածի վերանայումը որպէս ազրպէյճանամէտ քայլ միանգամայն հակակշռում է նշուած «հայամէտ» քայլը։ Հարցը սակայն տուկ «հայամէտ» հայկալի ազրպէյճանեանով հակակշռումը չէ, այլ՝ հակակշռի համարժէքութիւնը։ Դրա ապահովումը ենթադրում է «հակաթրքական» քայլի եւս հակակշռում։ Այսպիսով, անխուսափելի է դառնում Եւրոմիութեանն անդամակցութեան համար Թուրքիային առաջադրուած Հայոց Ցեղասպանութիւնը ճանաչելու նախապայմանի վերանայումը։ Ցատկանշական է, որ վերանայումը պատճառաբանում է «Հայ-Թրքական Հաշտեցման Յանձնաժողով»ի գործունէութեամբ։

Քանի որ յանձնաժողովը Հայոց Ցեղասպանութեան բանաձեւերի չէզոքացման առաջադրանքով Միացեալ Նահանգների արտաքին գործոց նախարարութեան նախաձեռնութեամբ է ստեղծուել, ուրեմն դժուար չէ կռահել, թէ Թուրքիային առաջադրուած վերոյիշեալ նախապայմանը ո՞ւմ նախաձեռնութեամբ է վերանայուելու։ Ցատկապէս այն դէպքում, երբ նախագահ Ճորձ Պուշն Աֆղանստանում ծաւալուող պատերազմական գործողութիւններին մասնակցելու դիմաց Թուրքիայում Եւրոմիութեանն անդամակցելու հարցում աջակցութիւն է խոստացել։

Վերանայման հարցն իր վերջնական լուծումը կը ստանայ Հոկտեմբերի 23-25ին, երբ Եւրոխորհրդարանը քննարկի Եւրոմիութեանը Թուրքիայի անդամակցութեան մասին տեղեկագիրը։ Թէ ինչպիսի՞ որոշում կը կայացուի, ցոյց կը տայ ժամանակը։ Բայց որ այդ որոշումն, անկախ դրա դրական կամ բացասական արդիւնքից, հազիւ թէ նպաստի Եւրոմիութեանը Թուրքիայի անդամակցութեանը, ակնյայտ է։ Հայոց Ցեղասպանութեան ճանաչման նախապայմանը եթէ նոյնիսկ վերացուի, Եւրոմիութիւնը Թուրքիային կ'առաջադրի մէկ այլ նախապայման։ Այսինքն՝ նախապայմանները բովանդակութեամբ փոփոխութեան կենթարկուեն, բայց անդամակցութեան պայմաններն էութեամբ կը մնան անփոփոխ։ Իրականում հարցը իրեւ նախապայման Հայոց Ցեղասպանութեան ճանաչումը չէ, այլ՝ դրա չարքրկումը ու չարքրկման անմիջականօրէն պայմանաւորումը «Հայ-Թրքական Հաշտեցման Յանձնաժողով»ով։

Ինչ վերաբերում է 907 յօդուածին, որքան էլ դա Միացեալ Նահանգների կառավարութեանն արդելի օգնութիւն չէր պատճառէր Ազըրպէյճանին, քանի դեռ վերջինն չի վերացրել Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի շրջափակումը, այնուամենայնիւ, արգելք մշտապէս չըլանցուում է։ Ահա թէ ինչու այդ յօդուածն ուժի մէջ է մնում, բայց Հայաստանին տրամադրուող ամերիկեան մարդասիրական օգնութիւնը տարեցտարի կրճատուում է, փոխարէնն Ազըրպէյճանին՝ շարունակ աճում։

Այս պայմաններում 907 յօդուածը խորհրդանշական բնոյթ է ստանում։ Դա, ի հարկէ, չի խանգարում, որ Միացեալ Նահանգները դրանով հիմնաւորի իր «հայամէտ» դիրքորոշումը։ Ուրեմն, եթէ Հայոց Ցեղասպանութեան հարցը չարքրկուում է որպէս Եւրոմիութեան Թուրքիայի անդամակցութեան նախապայման, եւ դա պայմանաւորուում է «Հայ-թրքական Հաշտեցման Յանձնաժողով»ի գործունէութեամբ, ապա 907 յօդուածն, իրեւ ամերիկեան հայամէտութեան դրսեւորում, անխնայ շահարկում է։ Հարկ է սակայն նշել, որ կարեւորը նախապայմանների չարքրկումը կամ յօդուածների շահարկումը չեն, այլ՝ Հայաստանի նկատմամբ Միացեալ Նահանգների որդեգրած քաղաքականութեան բնոյթը։ Կարծում ենք, Ղարաբաղի հարցում նրա ազրպէյճանամէտ, իսկ Հայոց Ցեղասպանութեան հարցում՝ թրքամէտ դիրքորոշումը յստակ պատկերացում է տալիս այդ քաղաքականութեան բնոյթի մասին։

ՅԱՊԱՔԵԱՆ
«Ազգ»

Հիբամսմետան Մամուլ

ԼՐԱՏՈՒԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԹՈՒՄ

ԼԱՀՈՒՏ ՎՃՌԱԾ Է ԻՐԱԳՈՐԾԵԼ ԻՐ ԵՐԴՄԱՆ ՃԱՌԻՆ ՄԷՋ ԿԱՏԱՐԱԾ ԽՈՍՏՈՒՄՆԵՐԸ

Կը թուի, թէ նախագահ էմիլ Լահուտ վճռած է իր իշխանութեան երկրորդ կիսուն իրազործել այն, ինչ որ չկրցաւ իրագործել անոր առաջին կիսուն՝ հաւատարիմ մնալու համար այն խոստումներուն, զորս ինք կատարած էր իր նախագահական երդման ճառին մէջ:

Ասոր համար ալ անհրաժեշտ է յիշեցնել այս ճառին մէջ տեղ գտած կարգ մը կէտերը, որոնց իրագործման արգելք հանդիսացաւ Լիբանանի քաղաքական բարդ կառուցուածքը:

Ա.- «Այս երկրին մէջ չկայ ապագայ ոեւէ մէկուն, ըլլայ իշխանաւոր թէ իշխուող, բացի եթէ կերտուի օրէնքի եւ հաստատութիւններու պետութիւնը» *ժողովրդավարական եւ խորհրդարանական վարչակարգի մը հովանիին տակ»:

Այս ականկալուած պետութիւնը դժբախտաբար չէ ստեղծուած, որովհետեւ տակաւին Լիբանանի մէջ կան մարդիկ, որոնք չեն ուզեր անոր ստեղծումը կամ ալ կրնան արգելք հանդիսանալ անոր ստեղծման առկեւ, որպէսզի պետութիւնը օրէնքի եւ հաստատութիւններու հասկացողութենէն զերծ մնայ:

Բ.- «Մարդիկ փոփոխութիւն չեն ուզեր, եւ անոնք իրենց յայտնի եւ իրաւացի պատճառներով

ունին. որքան որ անկարելի է այդ փոփոխութիւնը կատարել մէկ անգամէն, նոյնքան ալ այդ փոփոխութիւնը չի կրնար սկիզբ մը ունենալ»:

Փոփոխութիւն ուզող մարդիկ հարց կու տան, թէ արդեօք այդ մէկը իրականացա՞ւ նոյնիսկ հանգրուաններով, եթէ անկարելի է, որ տեղի ունենայ մէկ հանգրուանով, եւ արդեօք ան ունեցա՞ւ իր սկիզբը: Թերեւս առկայ էր բազմաթիւ արգելքներու հանդիպած սկիզբ մը, որուն սպասուած աւարտին հասնիլը կրնայ երկար տեւել:

Գ.- «Մարդիկ իրաւամբ կ'ուզեն դատական իշխանութիւն մը, որ անկախ ըլլայ իր անձնակազմին եւ վճիռներուն նկատմամբ եղած միջամտութիւններէն եւ ազդեցութիւններէն. դատական իշխանութիւն մը, որուն հաշիւը ընեն թէ՛ մեծը եւ թէ՛ պզտիկը»:

Արդեօք այսպիսի դատական իշխանութիւն մը ստեղծուեցա՞ւ, մինչ տարիներ առաջ պատրաստուած օրէնքի նախագիծը, որ պիտի երաշխաւորէր դատական իշխանութեան անկախութիւնը, տակաւին քննարկման մէջ է, եւ անոր շուրջ ծաւալած հակադիր կարծիքները կրնան ձախողութեան մատնել զայն:

Դ.- Կ'ուզեն վարչամեքենայ մը, որ ենթակայ է

խիստ հսկողութեան եւ յատկանշուած է կարողութեամբ եւ մաքրութեամբ, զայն կը ղեկավարեն պատասխանատուներ, որոնք իրենց վարկը կ'ապահովեն իրենց լաւ աշխատանքով եւ ո՛չ թէ քաղաքական ու համայնքային պաշտպանութեամբ. վարչամեքենայ մը, որմէ իրենց ստացած ծառայութիւններուն համար մարդիկ գոհունակութիւն չայտնեն իրենց վճարած տուրքերով, եւ ո՛չ թէ զանոնք գնեն կաշառքով»:

Այն, ինչ որ մինչեւ հիմա տեղի ունեցաւ, այն է, որ վարչամեքենան չ'ենթարկուի խիստ հսկողութեան եւ չի յատկանշուի իր կարողութեամբ ու մաքրութեամբ:

Ասոր փաստը այն է, որ վարչական նշանակութիւններու ընթացքին կիրարկուած բաժնեկցութեան եւ շահադիտական մօտեցումները տակաւին աւելի բարձր կը մնան, քան որեւէ այլ սկզբունք. իսկ կարողութեան եւ փորձառութեան չափանիշները որդեգրելու պահապանի ի յայտ եկած քաջընդունակները պատճառով դառնան անոնց ձախողութեան:

ԷՄԻԼ ԽՈՒՐԻ

Ցապաւումներով՝ «Նահար»

«ՄԵԾ ԿԱՊՈՅՏԻ ԱՐՇԱՒ»Ը ՄԿՍԱՒ ԱՐԻՏԱՅԷՆ ՄԻՆՉԵՒ ՆԱՔՈՒՐԱ

Լիբանանեան ծովափը՝ հարաւէն մինչեւ հիւսիս, անգամ մը եւս դարձաւ մաքրութեան եւ բարեկարգման կայան մը:

Հոգատարութեան «Սիտըրը» կազմակերպութեան նախաձեռնութեամբ, 21 Հոկտեմբերին սկսաւ «Մեծ Կապոյտի արշաւ»ը, որ այս կազմակերպութեան իրագործած «Մովեզերքի մաքրութիւն» նշանաբանով 5րդ ծրագիրն է վերջին հինգ տարիներուն ընթացքին: Այս արշաւին մասնակցեցան մեծ թիւով անձեր, որոնց կարգին ուսանողներ, սկաուտներ, միութիւններ, զինուորականներ եւ քաղաքային պաշտպանութեան եւ քաղաքապետարաններէն անդամներ:

Առաւօտեան ժամը 8:30ին արշաւը սկսաւ լիբանանեան ծովեզերքին վրայ գտնուող 75 կեդրոններէ եւ այս արշաւին մասնակցողները աղբեր հաւաքելով զետեղեցին պարկերու մէջ՝ վերադարձնելու հասցնելու նպատակով: Ուշագրաւ էր, որ այս արշաւին ընթացքին հաւաքուած աղբերը 60 առ հարիւրով նուազ էին նախորդ տարիներէն եւ այս երեւոյթը պատճառ դարձաւ, որ արշաւը աւարտի կէսօրուան ժամը մէկին: Պէյրութի ծովեզերքը խճողուեցաւ հարիւրաւոր կամաւորներով՝ Ռամէյթ Պայտայէն մինչեւ Ռաուշէ: Մաքրութիւնը կատարուեցաւ քանի մը ձեւերով. ծովեզերեայ ժայռերուն վրայի աղբերը մաքրուեցան յատուկ պարաններով օժտուած անձերու կողմէ, իսկ այլ խումբ մը սուզուելով ծովուն մէջ՝ անկէ դուրս բերաւ հոն գտնուող աղտերը, իսկ այլ խումբ մը կամաւորներ անցորդներուն կենսոլորտն ու բնութիւնը մաքուր պահելու կոչեր ուղղող հրատարակութիւններ բաժնեցին: Պէյրութի մէջ ծայր տուած արշաւի պատասխանատուներէն մէկը իր գոհունակութիւնը յայտնած է մեծ թիւով կամաւորներուն մասնակցութեան համար, ինչպէս նաեւ ըսած է, թէ հինգ տարիներու ընթացքին այս արշաւին արժանագրած մեծագոյն նուաճումը այն է, թէ քաղաքացիները որոշ չափով ընկալած են այս արշաւին ընդմէջէն փոխանցուած պատգամը, հասկցած են անոր նպատակները եւ գիտակցած են ծովեզերքն ու բնութիւնը մաքուր պահելու կարեւորութեան: Ան աւելցուցած է, թէ հաւառակ առոր, տակաւին լիբանանեան ծովեզերքին վիճակը վատ է եւ անդրադարձած է կազմակերպութիւններու գործակցութեան եւ միասին աշխատանք

ՅԱՏՈՒԿ ԴԱՍԸՆԹԱՅԵՆՆԵՐՈՒ ՇԵՏԻԵԼԷ ԵՏԶ

ՊԱԱՊՏԱՅԻ ԿԻՆԵՐՈՒ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԲԱՆՏԻՆ ԲԱՆՏԱՐԿԵԱԼՆԵՐԸ ՎԿԱՅԱԿԱՆՆԵՐ ԿԸ ՄՏԱՆԱՆ

Լիբանանի առաջին տիկին Անտրէ Լահուտի հովանաւորութեամբ եւ ներկայութեամբ, «Տար Ամալ» եւ Լիբանանի «Քարիթաս» միութիւնները, ինչպէս նաեւ գործ գտնելու ազգային հաստատութիւնը կազմակերպեցին վկայականներու բաշխման հանդիսութիւն՝ Պապատայի կիներու կեդրոնական բանտին մէջ:

Այս հանդիսութեան ընթացքին վկայականներ ստացան այն կին բանտարկեալները, որոնք որոշ ժամանակաշրջանէ մը ի վեր բանտին մէջ կը հետեւէին յատուկ դասընթացներու: 42 վկայականներ տրուեցան արհեստի զանազան մարգերու մէջ փորձառական դասընթացներու հետեւած կիներուն: Պաշտօնական հիւրերու կողքին, հանդիսութեան ներկայ գտնուեցան նաեւ վկայաւորներու ծնողները եւ անոնց բանտակիցները:

«Տար Ամալ» միութեան պատասխանատուներէն Հապիպ Հաթմէ շնորհակալութիւն յայտնեց առաջին տիկին Անտրէ Լահուտի եւ այն կազմակերպութիւններուն եւ անձերուն, որոնք բանտարկեալներով հետաքրքրուած եւ այս ծրագիրին յաջողութեան օժանդակած են: Ան նշեց, թէ այս ծրագիրին նպատակն էր անգործիւթիւնը ջնջել բանտերուն մէջ եւ բանտը վերածել բարեկարգման կեդրոնի մը եւ ոչ՝ պատիժի: Ան նաեւ պահանջեց ներքին գործոց եւ արդարութեան նախարարութիւնէն յաւելեալ հոգատարութիւն ցուցաբերել բանտարկուածներուն նկատմամբ՝ թէ՛ տնտեսական եւ թէ՛ մարդկային առումով: Հապիպ Հաթմէ աւելցուց, թէ բանտին մէջ գտնուող ուստիկանատուներ պէտք է փոխադրել դուրս: Խօսք առաւ նաեւ Լիբանանի «Քարիթաս»ի նախագահ Հայրէլի Մատի, որ ըսաւ, թէ այս նախաձեռնութիւնը լիբանանեան գետնի վրայ իրագործում մը ըլլալէ անկախ կը բարձրացնէ Լիբանանի անուըն միջազգային գետնի վրայ: Ան նշեց, թէ Լիբանանի բանտերուն մէջ պէտք է կատարուին շարք մը բարեկարգումներ ու բարեփոխումներ եւ պէտք է լրջօրէն նկատի առնուին բանտարկեալներուն մարդկային իրաւունքները: Ապա ան անդրադարձաւ այն աշխատանքներուն, զորս «Քարիթաս»ը կը կատարէ բանտերուն մէջ: Իր խօսքէն ետք Հայրէլի Մատի, ինչպէս նաեւ «Տար Ամալ» միութեան նախագահը յուշանուէրներ յանձնեցին առաջին տիկին Անտրէ Լահուտի:

Հանդիսութեան ընթացքին խօսք առաւ նաեւ գործ գտնելու ազգային հաստատութեան ընդհանուր տնօրէն Մուսա Ժատուն, որ ըսաւ, թէ հաւառակ տարած գործունէութեան, Լիբանանի մէջ առկայ է անգործութեան ընդհանուր տագնապ, որ աւելի պիտի շեշտուի բանտարկեալներուն պարագային: Ուստի կանութեան ընդհանուր հրամանատար զօր. Սայիտ Խո ըսաւ, թէ այս վկայականները իբրեւ գէնք պիտի ծառայեն բանտարկեալներուն համար:

Հանդիսութեան աւարտին բանտարկեալ վկայաւորները շնորհակալութիւն յայտնեցին բոլոր անոնց,



Ռաուշէի ժայռին դիմաց կամաւորներ կը մասնակցին արշաւին:

տանելու կարեւորութեան:

Արշաւը կ'ընդգրկէր նաեւ Աքքարի շրջանը՝ Արիտայէն մինչեւ Ապտէ (7 քիլոմետր), որուն մաքրութիւնը ստանձնեցին Լիբանանի երկրորդ զօրամասի զինուորները, ինչպէս նաեւ՝ կենսոլորտի, կրթական եւ այլ կազմակերպութիւններէ զանազան անձեր: Այս շրջանի մաքրութեան պատասխանատուներէն մէկը ըսած է, թէ այս տարուան արշաւը աւելի յաջող եղած է զանազան կազմակերպութիւններու մասնակցութեան պատճառով եւ նշած է, թէ մաքրութիւն կատարուեցաւ շրջանին ամէնէն աւելի ապականած եւ աղտոտ վայրերուն մէջ:

Սայտայի մէջ արշաւին մասնակցեցան շուրջ հազար կամաւորներ, զանազան կազմակերպութիւններէ եւ միութիւններէ, որոնց նշանաբանն էր՝ «միայն մի՛ թափեր»: Արշաւը ընդգրկեց Սայտայի զանազան շրջանները եւ վայրերը:

Այս արշաւը եւ անոր արդիւնքները տեսնելէ ետք հարց կու տանք, թէ ինչո՞ւ այսպիսի արշաւներ տարին քանի մը անգամ չեն կատարուիր, մանաւանդ որ մեծ թիւով կամաւորներ կան եւ արշաւը դրական արդիւնքներ կու տայ:

«ՆԱՀԱՐ»

ՀԱՄԱՃԽԱՐԿԱՅՆԱՑՄԱՆ ԴԵՍ ՊԱՅԵԱՐԻ ԱՐԱՔԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅՆԱՑՄԱՆ ՄԱՐՏԱՀԱՐԱՒԵՐՆԵՐԸ՝ 11 ՍԵՊՏԵՄԲԵՐԷՆ ԵՏՔ

Համաշխարհայնացման դէմ պայքարի արաբական համախմբումի մը ստեղծման համար տարածած շարժումի մը ծիրին մէջ, նորաստեղծ համախմբումը որոշած է Պէյրութի ԵՈՒՆԵՍԿՕի սրահին մէջ 35ն 4 նոյեմբերին կազմակերպել «Համաշխարհայնացման դէմ պայքարի արաբական առաջին հանդիպումը»՝ «Համաշխարհայնացման մարտահրաւէրները 11 Սեպտեմբերէն ետք» նիւթով:

Այս հանդիպումին պիտի մասնակցին համաշխարհայնացման դէմ պայքարի միջազգայնօրէն ճանչցուած գործիչներ, ինչպէս՝ Ժողովրդական Կրթական Միութենէն, Գրիսթոֆ Ակիթոն՝ Ֆրանսական Միջազգային «ATTAC» կազմակերպութենէն եւ Ժան Քլոտ Ամարը՝ «Spiral Sens» կազմակերպութենէն, ինչպէս նաեւ՝ կարգ մը արաբական պետութիւններէ (Սուրիա, Յորդանան, Պաղեստին, Իրաք,

Լիբանան, Թունիզ, Մալի եւ այլ երկիրներ) մասնակիցներ:

Հանդիպումը կը միտի իրագործել հետեւեալ նպատակները.

Ա.- Հետեւել համաշխարհային գետնի վրայ տեղի ունեցող վերջին իրադարձութեանց, մասնաւոր, այսպէս կոչուած, «հարեկութեան զէմ պատերազմին, եւ այս վերջինս ղեկ համաշխարհայնացման աշխուշ շրջագիծին մէջ:

Բ.- Մասնակիցներուն միջեւ քաջալերել բանաւիճը համաշխարհայնացումին հետ առնչուող բոլոր հարցերուն շուրջ եւ զայն վերլուծել՝ նկատի ունենալով անոր տնտեսական, ընկերային, մշակութային եւ քաղաքական երեսները:

Գ.- Առիթ ընծայել փորձառութեանց փոխանակման եւ փնտռել այլ ընտանքային լուծումներ՝ համաշխարհայնացման մարտահրաւէրներուն ենթակայ մարգերուն մէջ (կնոջ իրաւունքներ, կենսոլորտ,

ընկերային ապահովութեան մարգ, գիւղատնտեսութիւն, գիւղական շրջաններու զարգացում, եւ այլն):

Դ.- Ստեղծել շարժումի արաբական միացեալ շրջագիծ մը:

Մեկնելով վերոյիշեալ նպատակներէն՝ որոշուեցաւ հանդիպումի օրակարգին մէջ ներառել հետեւեալ կէտերը.

ա.- Համաշխարհայնացման նոր դիմագիծը (ապահովական, զինուորական, եւ այլն):

բ.- Համաշխարհայնացման ազդեցութիւնը արաբական իրականութեան վրայ (տնտեսական, ընկերային, մշակութային եւ այլ մարգերու մէջ):

գ.- Դէպի այլընտրանքային համաշխարհայնացում (հակահամաշխարհայնացում շարժումներ):

Հանդիպումի շրջանակներուն մէջ տեղի պիտի ունենան աշխատանքային խմբակներու նիստեր, որոնք պիտի քննարկեն ընկերային կենսական մարգերու դէմ համաշխարհայնացումի հասցուցած վնասները:

«ՍԱՖԻՐ»



Վկայեալներն մէկը՝ հարսանեկան հագուստի ցուցադրութեան պահուն:

որոնք օժանդակեցին այս ծրագիրին եւ բարձրացուցին իրենց հոգեկան կորուզը եւ ուրախութիւնն ու ժպիտը վերադարձուցին իրենց:

Հանդիսութեան ընթացքին ցուցադրուեցան վկայաւորներուն պատրաստած ձեռագլին աշխատանքները:

«ԱՆՈՒՐ»

ՅԱՅՏԱՐՈՒԹԻՒՆ Ս. ՆՇԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԱՆՈՒԱՆԱԿՈՉՈՒԹԻՒՆ

Կիրակի, 28 Հոկտեմբեր 2001ին, Գիւտ Խաչի Կիրակիի եկեղեցւոյս անուանակոչութեան տօնն է:

Այն հաւատացեալները, որոնք կը փափաքին մատաղցու ոչխար նուիրել կամ մասնակցի նիւթական նուիրով, թող բարի ըլլան կապ պահել թաղականութեան քարտուղարութեան հետ, հեռ. 981102, ամէն օր 8:00էն 1:00:

Ս. ՆՇԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԹԱՂԱԿԱՆՈՒԹԻՒՆ



ՄԵՐ ԶԱՄԱԿՆԵՐԸ ԵՒ ՄԵՆՔ

ՀԱՐՑԵՐ ԵՒ ԼՈՒԾՈՒՄՆԵՐ

ՈՐՈՇՈՒՄ ՏԱԼՈՒ ԴԺՈՒԱՐՈՒԹԻՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵՒԱՆ

Տուրմո՞վ, ելակո՞վ, թէ կիտրոնով պղպաղակ գնել...

Կարմիր, սե՛ւ, թէ կանաչ չապիկը հագնիլ...

Ծո՞վ, ալո՞ւմբ, թէ թատրոն երթալ...

Շատ մեծ թիւով երեխաներ տեւական վարանումի մէջ են ուրոշում տալու ղժուարութիւն ունին:

Մենք՝ մեծերս այս երեւոյթը յաճախ կը վերագրենք երեխային մօտ ինքնավստահութեան պակասի, մինչդեռ, մասնագէտներու կարծիքով, վարանումը նշան է, որ երեխան ի վիճակի է դատելու, տատամբելու, հաւանական բոլոր կարելիութիւնները քննելու եւ ինքզինք զանազան կացութիւններու մէջ տեսնելու:

Հետեւաբար ասիկա իբրեւ թերութիւն պէտք է առնել:

ԻՆՉՊԷՍ ՕԳՆԵԼ

Նախ պէտք է յանդիմանել կամ համբերութիւնը կորսնցնելով՝ զայրանալ ու դատապարտել երեխան: Թեւադրելի է կարելի եղածին չափ առիթ չտալ, որ ան քանի մը կարելիութեան առջեւ գտնուի եւ ընտրութիւն մը կատարելու պարտադրանքին տակ ըլլայ: Փոխանակ անոր հարցնելու, թէ շաքարավերջին ծո՞վ, գի՛ւղ, թէ թատրոն կ'ուզես երթալ, աւելի ճիշդ կ'ըլլայ ըսել՝ շաքարավերջին ի՞նչ կ'ուզես ընել: Փոխանակ հարցնելու՝ վաղը լուրիա՞, ուրո՞ւն թէ ոսպապուր կ'ուզես, կրնանք ըսել՝ երկար ատենէ ի վեր ոսպապուր կերած չես: Ի՞նչ կ'ըսես...

Այսպէս, հարցերը կրնանք պարզացնել, հաւանականութիւնները պակսեցնել եւ երեխային խնայել որոշում տալու տաղտուկը:

ՀԱՐՑԱԶՐՈՅՑ ՇՈՒՇԱՆ ՊԵՏՐՈՍԵԱՆ

«Երազ իմ երկիր հայրենի» երգին անգուգական մեկնաբան Շուշան Պետրոսեան մեծ ժողովրդականութիւն կը վայելէ Հայաստանի եւ Սփիւռքի մէջ: Տաղանդաւոր երգչուհիին հետ կատարուած հարցազրոյցէ մը քաղուած եւ ստորեւ տրուած հակիրճ տեղեկութիւններ իր նախասիրութիւններուն մասին՝ լաւագոյնս կը ծանօթացնեն զայն:

ԱՄԵՆԱՍԻՐԵԼԻ՝	
Քաղաքը	Երեւան
Գոյնը	Ճերմակ
Ծաղիկը	Շուշան եւ ճերմակ վարդ
Դերասանը	Մէլ Կիպուրն, Ճուտի Ֆոֆթըր, Ինա Չուրիքսովա
Երգիչը	Սթիւի Ուոնտըր, Մարիա Քալաս, Արաքս Մանսուրեան
Խմիչքը	Նարինջի հիւթ եւ թէյ
Կերակուրը	Մօրը տապակած գետնախնձորը
Տարուան եղանակը	Գարուն
Գրագէտը	Չարենց, Համօ Սահեան
Յօրինողը	Պախ
Մարզախաղը	Լող
Ձեւագէտը	Եամամոթօ, Քենզօ, Իսի Միաքէ
Ժապաւէնը	«Քաջարի սիրտ»

ԳԻՏԷԻՊ, ԹԷ...

ՈՐ ԱՍՏՈՒԾՈՅ ԱՊԱՒԻՒԼԻ

Յոյներու մօտ, ողիմպոսիցի իւրաքանչիւր չաստուած կը կառավարէր մարմնի կարգ մը օրկաններ: Այսպէս է, որ Քրոնոս տիտանը (կեանք տուող ուժը) կը հսկէր մարդուն ոսկորներուն եւ ակունքներուն: Հերմէսը՝ թողբերուն: Աֆրոտիթէն՝ ծննդական օրկաններուն: Արեւը կը պաշտպանէր սիրտը, արիւնը, մարմնին աջ կողմը եւ ուղեղը: Լուսինը կ'իշխէր մարսողական դրութեան վրայ եւ ծննդաբերութեան, բեղմնաւորման, արիւնի եւ մարմնի ձախ կողմին: Աւանդութեան մը համաձայն, եթէ յօդացաւ ունեցող անձ մը իր գրպանին մէջ ունենայ շագանակ մը, հիւանդութիւնը կը թեթեւնայ: Այս դարմանը ոչինչ է իբրեւ գին եւ կ'արժէ փորձել...

«ԱԶԴԱԿ»Ի ՀԵՌԱԶԱՅՆԻ ԹԻԻԵՐԸ

«ԱԶԴԱԿ»ի հետ կապուելու համար հեռաձայնել հետեւեալ թիւերուն.- 258526, 260115 եւ 241274:

ԿՐՈՑԱԿԱՆ ՈՐՔԱՆ ԿԱՐԵՒՈՐՈՒԹԻՒՆ ԿՈՒ ՏԱՔ ՈՒՐԻՇԻՆ ԿԱՐԾԻՔԻՆ

Որոշում տալու ղժուարութիւն ունիք եւ տեւաբար կը դիմէք ուրիշին կարծիքին, թէ՛ հակառակը՝ արագ վճիռներ կ'արձակէք եւ երբեք հետաքրքրուած չէք, թէ ի՞նչ կը մտածէ ուրիշը: Գիտնալու համար պատասխանը՝ կարգացէք բոլոր հաստատումները եւ շրջանակի մէջ առէք ձեր խառնուածքին համապատասխանողները, ապա հաշուեցէ՛ք ձեր խաչերն (X) ու կլորները (O) եւ կարգացէ՛ք արդիւնքը:

- X Երբ ուրիշներէն հասկցուելու ղժուարութիւն ունենամ, պատեամ ինչ մէջ կը քաշուիմ եւ կը մեկուսանամ:
- X Շատ արուեստ է Շատ տխուր բան է շաքարավերջը առանձին անցընելը:
- X Վեց ամիսը անգամ մը մեծ հաւաքով մը կը կազմակերպեմ բարեկամներու համար:
- X Չեմ ուզեր ուրիշներուն ուշադրութիւնը գրաւել:
- X Որեւէ ընտրութիւն կատարելու համար կը վստահիմ ներիմացութեանս:
- X Ամբողջ գիշեր մը կրնամ վիճիլ վերջին խօսքը ունենալու համար:
- X Շատ կը փափաքիմ արտաքին տեսքս փոխել, բայց կը վարանիմ:

O Անձնական հարցումներու շատ չեմ պատասխաներ: X Շատ կը սիրեմ գնումի երթալ բարեկամուհիի մը հետ: O Ուրիշներուն պէս չեմ հագնիր: X Մեծաւորներու հաւանութիւնը կ'առնեմ: X Սխալներ կը գործեմ առանց անդրադառնալու: X Մէկէ աւելի խորհրդականներ ունիմ:

- O Ծրագրիներս կը զարմացնեն բոլորը:
- X Սակաւաթիւ բարեկամներով ընթրիք մը մեծ հաճոյք կը պատճառէ ինծի:
- X Միշտ ալ աւելի զօրաւոր եղած եմ գրաւոր արտայայտութեան, քան բերանացիին մէջ:
- O Մանկութեանս յաճախ իշխանուհի կը ծպտուէի:
- X Կը զգուշանամ կարծիք յայտնելէ:
- X Յաճախ ես ինծի հարց կու տամ, թէ արդեօք պոռթկումներս արդարացի՞ են:
- O Ճաշարանին մէջ առանց վարանելու կը վերադարձնեմ չհաւնած կերակուրս:
- X Ազնիւ խօսք մը կը



հալեցնէ զիս: O Նշանաբան է՝ «Միշտ աւելին»: X Կը տիրիմ, երբ երազներս չեն իրականանար: X Անոնք, որոնք բան չեն ըներ, չեն սխալիր: O Ուրիշները սպասցնելը չի խանգարեր զիս: O Գիտեմ թերութիւններս առաւելութեան վերածել: O Չեմ հանդուրժեր, որ ընկերութեան մէջ անընկալ տնայնայնութիւններ լինեն:

ԱՐԴԻՒՆՔ

● Եթէ խաչերու (X) առաւելութիւն ունիք, անձ մըն էք, որ չափազանց կարիքը ունի ուրիշից կարծիքին:

Թերեւս մանկութեան չափազանց գուրգուրանք ստացած էք եւ կամ մեծցած էք առանց առաջնորդի: Յամեմայն՝ դեպս անորոշութիւնը արմատացած է ձեր մէջ: Ձեր մասին ունիք այն կարծիքը, որ ի վիճակի չէք պէտք եղածը ճիշդ ձեռքով ընելու: Նոր կացութիւնները ընկնուածութիւն կը պատճառեն ձեզի: Հրաժարեցէք տեւաբար ուրիշից կարծիքին դիմելէ եւ աւելի նախաձեռնող եղէք:

● Եթէ կլորներու (O) առաւելութիւն մը ունիք, հմայիչ, ցանկաւորող եւ վառ երեւակայութեան տէր անձ մըն էք, ոչ ոք անտարբեր կրնայ մնալ ձեզի հանդէպ: Ինքնաբոլիս եւ անկեղծ էք եւ անխուսափելիօրէն կ'ապրիք յուսաբարութիւններ, որոնք երկար չեն տեսներ: Պատրաստ էք գէշը մոռնալու եւ դեպի առաջ նայելու: Անցածը անցեալ է:

● Եթէ խաչերու եւ կլորներու թիւը հաւասար է, դուք ձեզի հետ հաշտ անձ մըն էք, իսկ ուրիշից կարծիքով հետաքրքրուած չէք: Երբ նպատակ մը ճշդէք, միջեւ ծայր կ'երթաք: Ձեր ուղից առանձին կը գծէք առանց ուրիշից վնասելու: Երկաթէ կամքի տէր էք եւ ամբողջական վստահութիւն ունիք դուք ձեր վրայ: Ուրիշներուն շատ չէք վստահիր, քանի որ վստահութեան անհրաժեշտութիւնը պակասելու: Ասիկա չ'արգիլէր, որ հաւատարիմ ըլլաք ձեր բարեկամութեան մէջ:

ՍՆՆԴԱԳԻՏԱԿԱՆ

ՉԱՓԵՅԷՔ ՄՆՆԴԱԳԻՏԱԿԱՆ ՉԵՐ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԸ

- 1 -

● Հաւելիւթը քոլեսթերոլը կը բարձրացնէ: ՃԻՇԴ. Եւ ՍԽԱԼ: Դեղնուցը հարուստ է քոլեսթերոլով, ահա թէ ինչո՞ւ բարձր քոլեսթերոլ ունեցողները պէտք է չափաւորեն հաւելիթի սպառումը: Իսկ անոնք, որոնք նման հարց չունին, հաւելիթին սպառումը մտահոգիչ չէ:

- 2 -

● Ճաշի ժամանակ պէտք է ջուր խմել: ՃԻՇԴ. Երբ առանց ջուր խմելու կը ճաշենք, աւելի արագ կուշտ կը զգանք: Մինչդեռ ճաշին հետ ջուր խմողները աւելի ժամանակ կը տրամադրեն կշտանալու համար:

- 3 -

● Բրինձը պնդութիւն կը պատճառէ: ՃԻՇԴ. Ճերմակ բրինձը բնաթել չի պարունակեր, ասիկա կ'ազդէ աղիքային գործունէութեան վրայ եւ բնաթելին պակասը որոշ չափով պնդութիւն կը պատճառէ: Ասոր ճարը պարզ է, բրինձին հետ պէտք է ուտել բնաթելով հարուստ բանջարեղէններ:

- 4 -

● Դեղին կարագը աւելի սննդաւոր է: ՍԽԱԼ: Կարագին գոյնը ոչ մէկ կապ ունի անոր որակին կամ սննդական արժէքին հետ: Ընդհանրապէս կարագին գոյնը կ'ազդուի անասունին կերած խոտին: Գարնան կարագը աւելի մուլթ գոյնի կ'ըլլայ, ձմրան՝ աւելի տոգոյն:

ԳԵՂԵՑԱԳԻՏԱԿԱՆ ՀԻՆԳ ՀԱՄՈՁԻՉ ՊԱՏՃԱՌՆԵՐ՝ ՇՐԹՈՒՆՔԻ ՆԵՐԿ ԳՈՐԾԱԾԵԼՈՒ

- 1 -

Շրթներուն անհրաժեշտ ջուր ապահովելու համար:

Տաքը, ցուրտը, հովը, ապականումը եւ ծխախոտը կը վնասեն մեր շրթներուն, կը չորցնեն զանոնք եւ կը զրկեն ջուրէ: Ներկայիս լաւ վաճառանքի շրթներէն ներկերը կը պարունակեն կլիւսէրին կամ զանազան բուսական իւղեր, որոնք մեր շրթները կը պաշտպանեն չորացումէ եւ անհրաժեշտ ջուրը կ'ապահովեն անոնց:

- 2 -

Կը ձեւաւորեն եւ ծաւալ կու տան: Շրթներուն ծաւալը շնորհիւ համար ներկայիս հրապարակի վրայ են յատուկ ներկեր, որոնք թանձրութիւն, փայլք եւ ծաւալ կու տան շրթներուն:

- 3 -

Կը պաշտպանեն: Լաւ վաճառանքի շրթներէն ներկերը կը պարունակեն յատուկ բաղադրութիւն մը, որուն շնորհիւ մեր շրթները կը պաշտպանուին արեւին վնասակար ճառագայթներէն եւ բնականաբար՝ կանխահաս ծերութենէն:

- 4 -

Կը լուսաւորեն... Երբ յոգնած դէմքի գիծեր ունինք, շրթներէն ներկը կը մեղմացնէ այդ գիծերը եւ մասամբ կը զուարթացնէ դէմքը: Շէկ թէ զգանալագոյն, նախապատուութիւնը տուէք վարդագոյնին կամ գինեգոյնին: Թուխներ թող ընտրեն գինեգոյնը կամ սալորի գոյնը, մասնաւորաբար թող հրաժարին նարնջագոյնի երանգներէն:

- 5 -

Կ'երիտասարդացնէ: Ժամանակի ընթացքին շրթները կը տոգունին եւ կը բարանան: Հետեւաբար մեղմ գոյնի շրթներէն ներկ մը կրնայ սրբագրել տարիքի հետ կապուած այդ թերութիւնը եւ աւելի երիտասարդ տեսք տալ դէմքին:

Պատրաստեց՝ ՇՈՒՇԻԿ ՍԱԻՍԱԳԱԼԵԱՆ



ՕՐԱՏԵՏՐ

ՀԱՐԺԱՊԱՏԿԵՐ

● **ՏՐ ԷՆԻՄՐԼ** - (Լսփաս, Ամփիր/ Տիւն, Սոսեթ, Մըալլէս 2001, Էլիթ, Կայաքսի, Սէթ Էլի, Լաս Սալինաս, Սթարկէթ) - Արկած էր եւր անփորձ ոստիկանի մը կեանքը կը փրկուի կենդանիներու մարմնի մասերու պատուաստումով: Երգիծական: Դերասաններ՝ Լիթ Կրեյնֆիլդ և Ռոպ Ենայտը:

● **ՇԼՈՂԱ ՔԵՅՄԸ ՍՈՒՅՏՏԵՐ** - (Փյանցը/ Ապրաժ, Ջուր, Բասիթ, Թրիփոլի, Բոնքորտ, Ֆրիուէ, Ամպասատ) - Ալեքս Բրոս կը կենդանի ծերակալությանի մը աղջիկը առեւանգողը: Գաղտնի ոստիկանական: Դերասաններ՝ Մորկըն Ֆրիման, Մոնիքա Փոթեր և Փենելոպ Ագն Միլը:

● **ՔԵՅՄԸ ՇԼՈՂԱ ՏԱԿՏ** - (Փյանցը/ Ապրաժ, Ջուր, Թրիփոլի, Բոնքորտ, Ֆրիուէ) - Ռոմիլիուս Լետպիթըր (Սամուել Դեթալ) հոգեկան միանգամ մը է, որ կ'ապրի Նիւ Եորքի հանրային պատեղներէ մէկուն մէջ քաղաքին մէջ: Օր մը, ան ծանր մը մէջէն կը գտնէ ղիակ մը եւ կ'որոշէ գտնել ոճրագործը:

● **ՕՐԻՖԻՆԵՐԼ ՍԻՆ** - (Լսփաս, Ամփիր/ Սոֆի, Տիւն, Սոսեթ, Մըալլէս 2001, Էլիթ, Կայաքսի, Սէթ Էլի, Լաս Սալինաս, Սթարկէթ) - Լարուստ հոգատէր մը կը պատկերի հարուստ կնոջ մը հետ: Դերասաններ՝ Անթոնիո Պանտերաս եւ Անթոնիո Ժոնի:

● **ՊՐԻՄԻՐ ԺՈՂՏ ՏԱՅՈՐ** - (Փյանցը/ Ապրաժ, Բասիթ, Թրիփոլի, Բոնքորտ, Ֆրիուէ) - Պրիմի Ժոնկը կը վարէ շուտու կեանք մը եւ շատ հեռու է իր կեանքը հակակշռել: Երգիծական: Դերասաններ՝ Շարոն Մակլէ, Ռոն Զեյնլէյր եւ Հիլ Կրաք:


● **ԷՅ. ԱՅ. ԱՐԹԻՆԻՆԵՐԼ ԻՆԹԵՐՆԵՐՆԱԼ** - (Փյանցը/ Ապրաժ, Ջուր, Թրիփոլի, Բոնքորտ, Ֆրիուէ) - Տէլփոս մարդասերնայ մըն է, որ կը զգայ, կը սիրէ եւ կը ցանկայ «իրական մարդ» դառնալ: Բեմադրիչ՝ Սթիվեն Սփիլարկ:



10:00 - Սապահո
14:00 - ԵւրոՆիուզ
14:30 - Լուրեր
15:00 - Արաբ. երկար
16:30 - Կենդանի գծանկար
17:30 - Տեղ. ֆիլմաշար
18:30 - Ուիլիսմ Թէլ
19:30 - Արաբ. լուրեր
20:00 - Ամ. երկար



17:15 - Քլիփ
7:30 - Թէլ
7:30 - Թէլ
7:30 - Թէլ



09:30 - Մինի Սթիուիո
10:30 - Տէ Եթեր Է Տէ Լէթ
11:00 - Ուս Թընսա
11:30 - Թէլթ Դենթ
12:00 - Էմ. Թի. Վի. Սփորթ
12:30 - Էս. Էլ. Եթ.
13:00 - Մարիսոլ
14:00 - Շուրնայ Ֆրանս 2
14:30 - Սի. Էն. Էն.ի լուրեր
15:15 - Աղանի աղանի
16:30 - Փոքեմոն
17:00 - Մինի Սթիուիո
17:45 - @Էմ. Թի. Վի.
18:45 - Ռոպալիտա
20:00 - Արաբերէն լուրեր
20:30 - Էս. Էլ. Եթ.
21:30 - Թոք Եթ.
23:00 - Էմ. Թի. Վի. Սփորթ
23:15 - Մնկուայէ Սփեշիալ




17:00 - Մինի Սթիուիո
17:45 - @Էմ. Թի. Վի.
18:45 - Ռոպալիտա
20:00 - Արաբերէն լուրեր
20:30 - Էս. Էլ. Եթ.
21:30 - Թոք Եթ.
23:00 - Էմ. Թի. Վի. Սփորթ
23:15 - Մնկուայէ Սփեշիալ

15:15 - Անթա Ուս Անա
16:30 - Մոտ
17:00 - Ալեքս
17:30 - Կ. գծանկար
18:00 - Քարլենտ Բրոս
19:50 - Հէյթ Սար
20:00 - Արաբերէն լուրեր
20:30 - Տեղական
21:30 - Քալամ Ալ Նաս
23:30 - Հէյթ սար
00:00 - Ամ. երկար



07:00 - Ալամ Ալ Սապահ
13:00 - Ճիէ Ինֆո
13:05 - Նոթք Լէնտինկ
14:00 - Անգլերէն լուրեր
14:25 - Ֆրանսերէն լուրեր
14:45 - Հայերէն լուրեր
15:00 - Արաբերէն լուրեր
15:30 - Արաբ. Ֆիլմաշար
16:30 - Թէլթթապիկ
17:00 - Ըզդար ըբպար
17:30 - Պիլ Նայ
18:00 - Պոլ Միթք Ուրլոտ
18:30 - Վաւերագրական
19:00 - Արաբական



20:00 - Արաբերէն լուրեր
20:30 - Ռուսու
20:32 - Հայաքա Ստաաֆ
22:30 - Նրս Տաքիա
23:30 - Սատրնի Սուպրն
00:00 - Ամ. երկար



15:00 - Լուրեր
15:30 - Մուխարաթ
17:00 - Ճիէ
17:30 - Սինեմա / 35 mm
17:45 - Միուպիթ
18:00 - Արաբ. յայտագիր
19:00 - Լուրեր
20:00 - Մարպական լուրեր
20:30 - Տիվերթիսման
22:00 - Տիվերթիսման
23:00 - Մարպական լուրեր
23:30 - Թաիթք Ալ Եաու
00:00 - Լուրեր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԵՍՈՒԹԻՒՆ
07:00 - Հայլուր
07:20 - Երկար ժապ.
«Կրկնակի վրիպում»
09:00 - «Պրանքոյի Այրին»
09:50 - Կէս գիշերային
10:30 - Համայնքապետկեր
11:00 - Հայլուր
11:20 - Ռուպիթն+
15:00 - Հայլուր
15:20 - «Արեւիկ»
15:55 - Երկար ժապաւէն
«Նորից ամառ եկաւ»
16:45 - Պոէզիայի

17:00 - Երեկոյան Երեւան
17:20 - «Բարի լոթ»
18:00 - Սոցիալական
ներդրումներին հիմնադրամ
18:35 - Տունտունիկ
19:00 - Հայլուր
19:50 - Անկախութեան
այբուրեն
19:55 - Պրեմիերա
20:00 - Հորովել
20:40 - «Բարի ակնթարթ»
21:30 - «Թրեյնին»
22:00 - Հայլուր
22:20 - Կէս գիշերային
23:00 - Հայլուր (ռուսերէն)
23:05 - Հայլուր (անգլերէն)
23:10 - Երկար ժապ.
«Ռոպեկանսը եւ
Գիլդենշտերն մեռած
են»

Արբանեակային
հեռարձակմամբ
23:10 - Երեկոյան Երեւան
23:25 - Սոցիալական
ներդրումներին հիմնադրամ
23:50 - Անկախութեան
այբուրեն
23:55 - Պրեմիերա
00:05 - Պոէզիայի
ակնթարթներ
00:10 - Հորովել

(*) Վերոյիշեալ յայտագիրները ենթակալ կրնան ըլլալ որոշ փոփոխութիւններու:

☆ Ի՞նչ կ'ընեն ԱՍՏՂԵՐԸ ☆

☆ **ԽՈՅ** (21 Մարտէն 20 Ապրիլ)
Եւանգելիս գործունէութիւն պիտի ունենայ ձեր գործատեղիին մէջ: Մի՛ մոռնաք կատարելու ձեր խոստումները, ինչ կը կը արաբերի ձեր ընկերային պարտաւորութիւններուն: Պիտի այցելէք ուխտատեղի մը:

☆ **ՅՈՒՆ** (21 Ապրիլէն 21 Մայիս)
Ջուր տեղ աշխատանք մի՛ տանիք յամառ մարդիկ համոզելու: Կեդրոնացէք ձեր ուժերուն վրայ: Համբերատարութեամբ վարուեցէք ձեր շրջապատին հետ:

☆ **ԵՐԿՈՒՈՐԵԱԿ** (22 Մայիսէն 21 Յունիս)
Աշխատանքի մարզին մէջ ամէն մարդ պիտի կանչի իր սովորութեան եւ պարտականութեան: Եթէ ձեր տեսակետները պիտի փոխանցէք, զանոնք կատարեցէք կամայ - կամայ, հանգրուան առ հանգրուան:

☆ **ԽՆՅԳԵՏԻՆ** (22 Յունիսէն 23 Յուլիս)
Ձեր ասպարէզին մէջ ժամանակը եկած է առաջին շաբթըրը գրաւելու: Օրը ունի յաջողութիւններ եւ ընկերութեան մէջ փայլելու առիթներ:

☆ **ԱՌԻԻՄ** (24 Յուլիսէն 23 Օգոստոս)
Ոչ մէկ պատճառ կայ յուսալքուելու: Ձեր շրջանակը կը քաջալերէ եւ կը հետեւի ձեզի: Օրը ունի իր առաւելութիւնները: Օգտուեցէք:

☆ **ԿՈՅՍ** (24 Օգոստոսէն 23 Սեպտեմբեր)
Ձեր մտադրած որոշումները իրագործեցէք. այսօր կրնաք կատարել ձեր փափաքները՝ ըստ ձեր տեսակետներուն: Ձեզի պիտի հետեւին ուրիշներ:

☆ **ԿԵՆԻՔ** (24 Սեպտեմբերէն 23 Հոկտեմբեր)
Այսօր մի՛ տեղափոխուիք, հոս ու հոն մի՛ երթաք: Յետաձգեցէք նաեւ համբորդութիւն մը, որ անհրաժեշտ է: Եղէք՝ աշխատունակ:

☆ **ԿԱՐԻՃ** (24 Հոկտեմբերէն 23 Նոյեմբեր)
Առանձնութիւնը կամ մեկուսացումը դրական անդրադարձ պիտի ունենայ: Այսպիսով պիտի կարենաք իրագործել կարեւոր աշխատանք մը եւ պիտի կարգադրէք փշոտ խնդիր մը:

☆ **ԱՂԵՂՆԱԻՈՐ** (24 Նոյեմբերէն 21 Դեկտեմբեր)
Հապենակ կարգադրութիւններ մի՛ ընէք, քննեցէք հարցերը մանրամասնութեամբ, ապա քե՛ռ կրնաք դէմ յանդիման գալ անորոշութեան մը: Օրը բարի է:

☆ **ԱՅԾԵՂՋԻՒՐ** (22 Դեկտեմբերէն 20 Յունուար)
Մի՛ վախճաք ձեր կարողութիւնները ցուցադրելու եւ ձեր փափաքները հետապնդելու: Շարունակեցէք հետապնդել ձեր նպատակներն ու աշխատանքները:

☆ **ՄՈՎԱՆՈՅՇ** (21 Յունուարէն 19 Փետրուար)
Աշխատանքի մարզին մէջ ջանացէք ապահովել ձեր գիրքն ու վարկը: Հսկեցէք ձեր առողջութիւնը: Հեռու մնացէք օդի հոսանքով միջափայլերէ:

☆ **ՋՈՒԿ** (20 Փետրուարէն 20 Մարտ)
Հանելի անակնկալ մը պիտի գուարացնէ ձեր օրը: Տրամադիր եղէք օգնելու տկար եւ օգնութեան կարոտ անձերու: Ձեր վեհանձնութիւնը պիտի վարձատրուի ապագային:

Կ'ՈՒՋՈՒՄԻՆ

● Կարուհի գործաւորուհիներ: Սին Էլ Ֆիլ (Ժըպր Ուսթի): Հեռ. 01-512012 եւ 03-733704:

ՏԱՌՈՒՅԱՐԿԱԲԱԺԻՆ

● Ժտէյտի շրջան, 1 մնջասնճակ, հիւրարարահ: Ա. յարկ: Գին՝ 23,000 տոմար: Հեռ. 03 - 749946:

ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

ԿԱՐՊԻՍ ԿԵՄԻՃԵԱՆԻ (մահացած՝ Մոնրէալ-Զանատ) մահուան քառասունքին առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 28 Հոկտեմբեր 2001, Ամթիլիսի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր տաճարին մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ԿԱՐՊԱՆ ԻՐԱՏԵԱՆԻ մահուան քառասունքին առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 28 Հոկտեմբեր 2001, Պուրճ Համուտի Հայ Կաթողիկէ Ս. Փրկիչ եկեղեցւոյ մէջ, առաւօտեան ժամը 10:00ին:

MESROBIAN TECHNICAL COLLEGE

The Pioneer In Technical Education
Morning, Afternoon & Night Classes

English & French Sections

Technical Baccalaureate B.T.

- Sales & Commercial Relations
- Kindergarten (Jardinière)
- Architecture Drawings
- Interior Design

Private Specializations

- Computer Courses
- English Language
- "TOEFL & Cambridge University Certificate"
- Foreign Languages
- Business Studies
- Travel & Tourism "Ticketing"
- Jewellery Design
- Diamond Setting
- Wax Modeling
- Make - Up
- Hair Styling
- Computer Repair "Hardware"
- TV & Video Repair "Dish Installation"
- Car Electricity - Electronics

New

1 - London Chamber of Commerce & Industry "LCCI"

2 - International Air Transport Association "IATA"

(Parking Assured)

Arax Street, Bourj Hamoud
Tel: 01 / 260 504 - 254 938 / 9 Fax: 01 / 262 955
E-mail:mesrobca@dm.net.lb Web Site:www.mesrobian.com

ԿԸ ՆՈՒԻՐԵՆ

● Սեպտեմբեր Ծահապագեանի մահուան առիթով, փոխան Ծաղկեպատի Ս. Նշան Մայր եկեղեցւոյ եղած եւ հետեւեալ նուիրատուութիւնները. Տէր եւ տիկին Սարգիս Մէծտիկեան 50,000 լ.ո., տէր եւ տիկին Ժողէֆ Գարախանեան 25,000 լ.ո., տէր եւ տիկին Աթո Գարատեալեան 15,000 լ.ո., տէր եւ տիկին Փիթըր Խաչարեան 20,000 լ.ո., տիկին Վերթիկի Խօշեան 30,000 լ.ո., իվան Թիւֆէնքեան 50,000 լ.ո., տէր եւ տիկին Գարլո Աւագեան 30,000 լ.ո., տէր եւ տիկին Վարուժան Խանգեան 50,000 լ.ո., տէր եւ տիկին Տէր Սահակեան 50,000 լ.ո., տիկին Անթէլ Սահակեան 50,000 լ.ո., տէր եւ տիկին Պարգէ Մակարեան 50,000 լ.ո., պրն. Ժորժ եւ Ռէն Սաթէլ 20,000 լ.ո., տէր եւ տիկին Հայկ Գոնիքեան 20,000 լ.ո., պրն. Նապիլ Ղուսուն եւ ընտանիք 50,000 լ.ո., օրդ. Սինթա Գրվըրեան 20,000 լ.ո., Թոքաթեան ընտանիք 40,000 լ.ո., տիկին Ժանգէր Պետոյեան 50,000 լ.ո., տէր եւ տիկին Բիւզանդ Պետոյեան 50,000 լ.ո., տէր եւ տիկին Պոզանդ Պետոյեան 50,000 լ.ո., տէր եւ տիկին Կարո Նիկոլեան 50,000 լ.ո., տէր եւ տիկին Հայկ Աթաթեան 25,000 լ.ո., Գրիգոր Թերգեան 30,000 լ.ո., Յակոբ Միթիլեան 30,000 լ.ո., Ժան - Փիետ Մէլքի 25,000 լ.ո., Մելքոն Թորոսեան եւ զաւակունք 50,000 լ.ո., Պուրթոն Շաֆիք Աուն 100,000 լ.ո., Արարամ Արարամեան եւ զաւակունք 50,000 լ.ո., տիկին Լուսին Արոյեան 25,000 լ.ո., տէր եւ տիկին Ասատուր եւ Արմիկ Արոյեան 25,000 լ.ո., Ապու Ֆարիտ եւ ընտանիք 20,000 լ.ո., Թոնի Ծալիթա 20,000 լ.ո., Իպրահիմ Ժապեր 20,000 լ.ո., Ապու Միշէլ 40,000 լ.ո., տէր եւ տիկին Գրիգոր Ծահապագեան 100,000 լ.ո., տոքթ. Կարո Ջուլեան 20,000 լ.ո., Եսուփ Մասալուֆ 30,000 լ.ո., տիկին Մարիամ Տէր Սահակեան 20,000 լ.ո., Թըլըսըմեան քոյրեր 20,000 լ.ո., տէր եւ տիկին Կիրակոս Տէր Սահակեան 10,000 լ.ո., տէր եւ տիկին Դետիկ Սուլքանեան 10,000 լ.ո., տիկին Հաստատ 15,000 լ.ո., Ժան Զովակիմեան 20,000 լ.ո., պրն. Իսամ Պայտուն 100,000 լ.ո., տոքթ. Թուֆիք Սամահա եւ ընտանիք 100,000 լ.ո., Գասպար Իսքէնտէր 10,000 լ.ո., Ժան Եագուպ 20,000 լ.ո., Արփի Զարամ 50,000 լ.ո., տոքթ. Էլի Խուրի 20,000 լ.ո., Անթուան Խընէյսըր 15,000 լ.ո., Միշէլ Հապիպ եւ ընտանիք 15,000 լ.ո., Սամիր Հապիպ եւ ընտանիք 15,000 լ.ո., Սիլալէ Ժապարեան 100,000 լ.ո., Էլի Պըրրի եւ ընտանիք 20,000 լ.ո., Զըլտան Թէքսթիլ 50,000 լ.ո., Ժողէֆ Հաննա 50,000 լ.ո., տէր եւ տիկին Յակոբ Հէքիմեան 50,000 լ.ո., տէր եւ տիկին Սամի Ժորժէ 15,000 լ.ո., Սամի Սըմահա 30,000 լ.ո., տէր եւ տիկին Պոզոն Թոփալիքեան 40,000 լ.ո., տէր եւ տիկին Փօլ Մանընշէ 30,000 լ.ո., Տիրան եւ Հրակ Տօնիկեան 20,000 լ.ո., Անդրանիկ եւ Խաչիկ Պոյաճեան 100,000 լ.ո., տէր եւ տիկին Աւետիս Թերգեան 30,000 լ.ո., Ֆատի Ըստէ եւ ընտանիք 150,000 լ.ո., տէր եւ տիկին Վահէ Մովսէսեան 50,000 լ.ո., տէր եւ տիկին Օճնիկ Գուլաճեան 20,000 լ.ո., տէր եւ տիկին Հապիպ Հապիպ 50,000 լ.ո., տէր եւ տիկին Զարուս Արսլանեան 50,000 լ.ո., Ինթեր Շու Զարուսիւն Տօնիկեան 50,000 լ.ո., տէր եւ տիկին Ժան Զարիմ Նասիֆ 20,000 լ.ո., տէր եւ տիկին Ժան - Գլոտ Պուլէյրի 20,000 լ.ո., Ծաքիա Պարուտ 20,000 լ.ո., Պան Լիպանգէ Է Տուրթըր - Մէր 100,000 լ.ո., Ժան Համաի եւ ընտանիք 50,000 լ.ո., Ռընէ Խուրի 20,000 լ.ո., Ժան Փիետ 50,000 լ.ո., տէր եւ տիկին Զովհաննէս Թորոսեան 20,000 լ.ո., տէր եւ տիկին Վարուժան Աղասարգիսեան 5000 լ.ո., Ժան Նազարեան 50,000 լ.ո., Հապթո Հապպուսի 50,000 լ.ո., տէր եւ տիկին Զովհաննէս Հաճինազարեան 5000 լ.ո., տէր եւ տիկին Տիրան Միսիրեան 50,000 լ.ո., Զամիլ Հաստատ 50,000 լ.ո., Թոնի Մաղզէլ 50,000 լ.ո., Ապահեան ընտանիք 20,000 լ.ո., տոքթ. Սիւլվա Վահանեան 30,000 լ.ո., Էլի Զամար 25,000 լ.ո., Վարդան Սանդուրեան 25,000 լ.ո., Նազուզեան ընտանիք 30,000 լ.ո., տէր եւ տիկին Մանուէլ Արոյեան 20,000 լ.ո., տէր եւ տիկին Կերի Նիկոլեան 30,000 լ.ո., Ժորժ Զըղէյա 50,000 լ.ո., տիկին Աագիզ Համաուի 50,000 լ.ո., Միշէլ Ապտօ 50,000 լ.ո., տէր եւ տիկին Ժողէֆ Լուրֆի 50,000 լ.ո., Սիրան Պալքեան 25,000 լ.ո., տէր եւ տիկին Զակոբ Նազարեան 25,000 լ.ո., տէր եւ տիկին Վահէ Տէլիքմէնեան 20,000 լ.ո., տէր եւ տիկին Զովհաննէս Դերձակեան 50,000 լ.ո., Յակոբ Տէմիրեան 20,000 լ.ո., Ժան, Նէլի Մակարեան 20,000 լ.ո., տէր եւ տիկին Մանուկ Անթուան 10,000 լ.ո., տէր եւ տիկին Զովսէփ Զէշիշեան 5000 լ.ո., տէր եւ տիկին Ռաֆֆի Գալուստեան 5000 լ.ո., տէր եւ տիկին Վազգէն Մարկոսեան 5000 լ.ո., տէր եւ տիկին Եփրէմ Զըլըրտեան 60,000 լ.ո., տէր եւ տիկին Զաքարի Քուլարեան 20,000 լ.ո., Մարտիկ Գուլումեան 20\$, Թոնի եւ Անթուան Ֆարհաթ 20\$, օրդ. Արտա Կոստանեան 20\$, Պերճ Պասմանեան 20\$, Ծահէ Իմաստունեան 50\$, Գրիգորեան եւ Զէշեան ընտանիք 30\$, Յակոբ եւ Սիւզի Պերպէրեան 20\$, Ժան Օղասապեան 20\$, տէր եւ տիկին Հայկազ Լաքոյեան 50\$, տէր եւ տիկին Ժան Լաքոյեան 50\$, տէր եւ տիկին Համազասպ Ղուկասեան 20\$, տէր եւ տիկին Սարգիս Պապիկեան 100\$, տէր եւ տիկին Էմոն Ասաֆ 50\$, տէր եւ տիկին Մըթրի Ազգար 20\$, Գորնոյեան ընտանիք 50\$, տէր եւ տիկին Միրանդ Պէօյիքեան 50 տոմար, մեթր Էմիլ Նաթըմ եւ ընտանիք 50, Ռոպեր Նարկիզեան 20 \$, տէր եւ տիկին Զորապ Թորոսեան 20\$, Ռաֆայէլ Ումուտեան եւ ընտանիք 20 \$, Հապիլ եւ Ժողէֆ Համաուս եւ ընտանիք 50\$, Նապիլ Սարգիս եւ ընտանիք 50\$, Հապթո Հապպուսի 10\$, տէր եւ տիկին Աւետիս Անթուան 20\$, տէր եւ տիկին Փանոս Մամիկոնեան 20\$, տէր եւ տիկին Խաչիկ Տիմիզեան 50\$, Սարգիսեան եղբայր 100\$, տէր եւ տիկին Ծահիլեան 30\$, տէր եւ տիկին Արա Վանեան 50\$ եւ տէր եւ տիկին Զովսէփ Զուլեան 20\$:

ԱԶՐՊԻՅՃԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ...

Շարունակուած՝ 5րդ էջէն

Խորհրդային տարիներին, թախիշները բազմիցս հանդէս են եկել իրենց ազգային, մշակութային իրաւունքները պաշտպանելու պահանջներով: Խորհրդային ղեկավարութեան յղած իրենց նամակներում նրանք մոսկովեան իշխանութիւններին պահանջում էին ինքնավարութիւն եւ նշում, որ ենթարկում են բռնի ազերիացման, ազգային, մշակութային խտրականութեան:

Հետաքրքրական է, որ Խորհրդային Միութեան փլուզումից ետք, 1990ական թուականներին, երբ Ազրբայէյանը ռազմական գործողութիւններ էր սկսել Հայաստանի ու Ղարաբաղի դէմ, 1992ին հռչակուեց Թալիշ-Մուղանի Հանրապետութիւնը, ինչը լուրջ անհանգստութիւն պատճառեց Պաքիստանը: Այժմ էլ այդ շրջանը Ազրբայէյանում համարում է լուրջ սպառնալիքի եւ ապակայունացման օճախ, որտեղ հաւանական է նկատուում «րնկերային» - խմբային հակադրութիւնների վերաճումը ազգային: Բացի այդ, Ազրբայէյանում լուրջ մտավախութիւն կայ այդ շրջանում Իրանի ազդեցութեան ու վերջինիս կողմից՝ «բաժանւած ժողովրդի» գործօնը օգտագործելու կապակցութեամբ:

- Լեզգիներ. - Բնակւում են Տաղստանի հարաւում (Ռուսաստան) եւ Ազրբայէյանի

հիւսիս-արեւելեան շրջաններում: Ըստ 1989ի մարդահամարի՝ Ազրբայէյանում կար 171 հազար լեզգի բնակչութիւն:

Լեզգիները Կովկասեան Աղուանքի ազգային հիմնական միաւորներից են: Այս հնագույն ժողովրդի մասին վկայութիւններ կան միջնադարեան աղբիւրներում: Հայ-լեզգիական աղբիւրներում գնում են դարերի խորքը: 19րդ դարու կեսերին, նաեւ լեզգիները աշխուժմանակցութիւն ունեցան իմամ Շամիլի գլխավորած լեռնականների ապստամբութեանը: Ազրբայէյանական Հանրապետութեան կազմաւորումից յետոյ, լեզգիները յայտնուեցին պետական տարբեր կազմաւորումների՝ Ռուսաստանի Դաշնութեան ու Ազրբայէյանի կազմում:

Լեզգիները եւս խորհրդային տարիներին ենթարկուել են Ազրբայէյանում վարող ազգային փոքրամասնութիւնների ճնշման, իրաւունքների ոտնահարման քաղաքականութեանը: Այնուամենայնիւ, այդ տարիներին անգամ, նրանց շրջանում կային խմորումներ իրենց ազգային իրաւունքների պաշտպանութեան ուղղութեամբ: Խորհրդային Միութեան վերջին տարիներին այդ ելոյթներն ուժեղացան: 1989ին ստեղծուեց «Մատվալ» (Միաս-

նութիւն) կազմակերպութիւնը, որի նպատակն է Լեզգիստանի հանրապետութեան ստեղծումը՝ հիւսիսային Ազրբայէյանի եւ հարաւային Տաղստանի լեզգիաբնակ տարածքների միաւորմամբ: 1991ին Տաղստանի Քասումքենդ անունով տեղի ունեցած համալեզգիական համագումարը հռչակեց Լեզգիստանի Հանրապետութեան ստեղծումը՝ Ազրբայէյանի հիւսիսի եւ Տաղստանի հարաւի լեզգիաբնակ տարածքներում, Ռուսաստանի Դաշնութեան կազմում: 1992ին լեզգիները շրջափակման ենթարկեցին Պաքու-Ռուստով մայրուղին՝ իրենց պահանջների վրայուղադրութիւն հրաւիրելու նպատակով:

Ազրբայէյանում լեզգիաբնակ շրջաններն այժմ էլ համարւում են երկրի ապակայունացման հնարաւոր օճախ, որտեղ մշտապէս ներկայ է «անջատողական» շարժումների աշխուժացման վտանգ եւ սպառնալիք՝ ուղղուած «ապագամիջեան կայունութեանը»: Մտավախութիւն կայ նաեւ, որ Ռուսաստանը կարող է օգտագործել լեզգիական գործօնը իր կովկասեան քաղաքականութեան մէջ:

Ազրբայէյանը ազգային փոքրամասնութիւնների համար անորոշ է, թէ հեռանկարում ի՞նչ վարգացումներ կ'ընթանան:

«Հորիզոն»

ՁՈՒԻՑԵՐԻՍ

ՄԱՅԱՑՈՒ ԱՐԿԱԾ՝ «ԿՈԹԱՐՏ» ՓԱՊՈՒՂԻՆ ՍԵՉ

ՁՈՒԻՑԵՐԻՍ, 24 (ՌՈՅԹԸՐԶ).- Աշխարհի երկրորդ ամենաերկար փապուղիին՝ Ձուիցերիոյ «Կոթարտ» փապուղիին մէջ երկու փոխադրականներ իրարու բախեցան Չորեքշաբթի օր՝ խլելով նուազագոյնը ինը զոհեր եւ վիրաւորելով շատ մը ուրիշներ:

«Իմ տեղեկութիւններուս համաձայն, մահացած են ինը անձեր», յայտնեց ոստիկանութեան մէկ բանբերը:

Բանբերը ընդգծեց, որ զոհերուն վերջնական թիւը տակաւին յստակ չէ:

Արկածէն ետք փապուղին փակուեցաւ, որ պատճառեց հսկայ խճողում: Փապուղիին տանիքէն մաս մը քանդուեցաւ:

Ականատեսներ յայտնեցին, որ շտապ օգնութեան անդամները եւ ոստիկանութիւնը դժուարութիւններ ունեցած են արկածի վայրին հասնելու՝ մուխին եւ տաքութեան պատճառով:

«Հրդեհ մը ծագեցաւ 300 մէթր երկարութեամբ փապուղիին մէջ, որովհետեւ փոխադրականներէն մէկը բեռնուած էր անիւներով: Այրած անիւներուն հոտը արգելք կը հանդիսանայ փրկարար աշխատանքներուն», յայտնեց ան:

«ԹՈՒՐԲ-ՀԱՅԿԱԿԱՆ ...»

Շարունակուած՝ 5րդ էջէն

դիպման ընթացքում Ամերիկայի Հայկական Համագումարի հոգաբարձուների խորհրդի նախագահ Հրայր Յովնանեանը նախկին նախագահ Պուշի կառավարութեան բարձրաստիճան պաշտօնեաներին ասել է, որ «Հայոց Յեղասպանութիւնը քաղաքական հարց չէ, այլ՝ պատմաբանների ուսումնասիրութեան խնդիր»: 1996 թուականի Յունիսի Ամերիկայի Հայկական Համագումարը որեւէ ձեւով չի աջակցել Ռատանովիչ-Պոնիոր ուղղմանը, որը ենթադրում էր կրճատել Միացեալ Նահանգների օգնութիւնը Թուրքիային, քանի որ վերջինս մերժում է Հայոց Յեղասպանութիւնը: Ամերիկայի Հայ Դատի Յանձնախումբին մօտ կանգնած աղբիւրները պնդում են, որ 2000 թուականի Յունիսի 12ին Ամերիկայի Հայկական Համագումարը առանձին հանդիպել է Ներկայացուցիչների Տանը խօսնակ Տենիս Հէսթրթի հետ եւ քննարկել այն հարցը, թէ «ինչու Հայոց Յեղասպանութեան ճանաչումը պէտք չէ դառնայ Քոնկրէսի քննարկման թեման»:

Նիւ Եորք
«Ազգ»

ԽԱՉԲԱՌ ԹԻՒ 4990 Պատրաստեց՝ Տ.Մ. ԱՐԱՋԱՐԵԱՆ

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11
1											
2											
3											
4											
5											
6											
7											
8											
9											
10											
11											

ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ	ՈՒՂԱՄԱՅԵԱՅ
1. Մաղնիսացած ասեղով բեւեռացոյց գործիք:	1. Գերութիւն կամ արդելք - Հոմանի:
2. Փլատակ - Որթատուկի յենակ:	2. Երբեմն կապուտան ծով կոչուած լիճ - Կանացի կոչական բառ:
3. Գելարան, տանջարան - Քաջասիրտ (Հակ.):	3. Ուղղեակ - Բանիմաց, մասնագէտ:
4. Ժամանակի միաւոր - Հսկայ:	4. Սեւցած - Չուան, պարան:
5. Որոշուած գին - Յամառ չորքոտանի - Սեբեղօնի որդիներէն:	5. Հիթլէրի կուսակից - Հնազանդ:
6. Արհամարհանք:	6. Աղամանդ - Արքունի:
7. Սոսկ - Եղանակաւորիչ մակբայ:	7. Գեղեցիկի բմբունում - Փոխադրէ:
8. Մայր, մայրիկ - Շիւի գոցելիք:	8. Նիհար - Աղբիւր:
9. Բոյս - Հասկցիր:	9. Շարունակ - Ոտքով տրուած հարուած:
10. Մէկը - Շին Թէյնի զինուորական թեւը:	10. Շատ պաղ - Թիւ:
11. Հին, վաղեմի - Հայկական խազ մր:	11. Փոքրացնող մասնիկ - Արցախի հնամալներէն:

ԹԻՒ 4989

ԽԱՉԲԱՌԻՆ

ԼՈՒԾՈՒՄԸ

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11
1	Մ	Ա	Ղ	Կ	Ո	Յ	Մ	Ի	Տ		
2	Մ	Ր	Ա	Ր	Ա	Ա	Կ	Ա	Տ	Ի	Ր
3	Մ	Ո	Տ	Ա	Ա	Ն	Ա	Ի	Ա	Ջ	
4	Ո	Ի	Կ	Ա	Կ	Ղ	Ի	Լ	Ա		
5	Ր	Ե	Ն	Ա	Կ	Ա	Ն	Ի	Մ	Ա	
6	Ս	Ո	Ն	Ա	Ի	Մ	Ա	Ս			
7	Ա	Տ	Ր	Ն	Ո	Խ	Կ				
8	Ք	Ս	Ա	Ջ	Ո	Լ	Ո	Կ			
9	Ե	Ս	Կ	Տ	Ր	Ա	Տ	Տ	Ա		
10	Ղ	Ա	Լ	Ի	Վ	Ա	Յ	Ն			
11	Մ	Կ	Հ	Ա	Ն	Ա	Մ	Ո	Յ		

ՀԱՐՇԵՔ 15,000 ՏՈԼԱՐԻ ԱՐԺԷՔԱԻՈՐ ՆՈՒԵՐՆԵՐ

Win up to \$15,000 in prizes

Peugeot 206
Trip to Cyprus for 2 persons (6 nights)
2 FUJITSU air condition
2 General Electric washing machine
Sony HI FI DX5
Philips DVD 711 with zoom
Panasonic TV 21 inch
Sony TV 21 inch
Continental oven



Peugeot 206 ինքնաշարժ մը
2 անձի Կիպրոս ճամբորդութիւն (6 գիշեր)
2FUJITSU էր ջոնտիսիոնէ
2 General Electric լուացքի մեքենայ
Sony հայ ֆայ Dx5
Philips DVD 711 զոււմով
Panasonic հեռատեսիլ 21 ինչ
Sony հեռատեսիլ 21 ինչ
Զոնթինեմբալ փուռ

